№ 1 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 1 1908 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 1 № 1

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

քաղաքական եւ գրականական լրագրի

ՆԵՐԿԱՅ 1908 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(36-րդ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի:

Յունվարի 1-ից մինչև մարտի 1-ը արժէ 1 րուբլի:

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն):

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԺԻՇԿ
Ի. Ե. ԳՕԿԻԵԼՕՎ
Ընդունում է յատուկ վեներական, միզանցքասեռական, սիֆիլիս, կաշուի և սեռական թուլութիւն ունեցող հիւանդներին, 9—12 ժ. առաւ. 5—$7\frac{1}{2}$ ժ. երեկ.: Ջղային թուլութեան բժշկելը էլեկտրականութեամբ և ջրաբուժութեամբ: Михайловская, № 113, Վեացելի հիւրանոցի մօտ, տելեֆօն № 242.
(25, 1, 6.) առ. 3—2

ՆՈՐ ՏԱՐԵՇՐՋԱՆ

Սկսում ենք նոր տարեշրջան:

Սկսում ենք նրան լի հաւատով դէպի այն վեհ կոչումը, որ դրված է մամուլի օրգանի վրա, միևնոյն ժամանակ խորապէս զգալով, որ գտնվում ենք շատ լուրջ և պատասխանատու խնդիրների շրջանում:

Մենք, ի հարկէ, չենք կարող գուշակել, թէ ինչ դրական արդիւնքներ կը տայ ներկայ նոր տարին մեր կեանքի և հասարակական զարգացման համար. բայց մենք լաւ գիտենք, որ մեր հասարակական և ժողովրդական գործունէութեան եղանակից շատ բան է կախված այս ու այն հետևանքը առաջացնելու համար կեանքի մէջ:

Մենք պէտք է կարող լինենք ուշի ուշով ուսումնասիրել մեր առաջ դրված խնդիրները և ներգործական դեր կատարել նրանց քննութեան, մշակութեան և լուծման գործում:

Ի՞նչ խնդիրներ են դրված մեր առաջ:

Յիշատակենք հերթականները.

Ժողովրդին հաց և սերմացու մատակարարելու խնդիրները:

Երկրի մէջ բարեփոխութիւններ մտցնելու խնդիրները:

Կրթական գործի կազմակերպութեան խնդիրները:

Կաթողիկոսական ընտրութեան հետ կապված խնդիրները:

Եւ բազմաթիւ ուրիշ խնդիրներ, որոնք արդէն դրված են հրապարակի վրա և հանդէս կը գան առաջիկայում:

Եթէ մեր հասարակութիւնը անհոգ կը վերաբերվէ դէպի իր առաջ դրված խնդիրները, կամ կը ցանկանայ նրանց էութիւնը աղաւաղել, այն ժամանակ նա կը պատրաստէ իր համար անտանելի ծանր կնճիռներ, որոնց ճնշման տակից նա անկարող կը լինի շուտով դուրս գալ տարիների ընթացքում:

Նոր-Տարվայ համարում, նոր տարեշրջանի սկզբում մենք պարտաւոր ենք զգում յիշեցնել մեր հասարակութեանը նրա առաջ դրված ծանրակշիռ խնդիրների մասին, յիշեցնել նրա վրա դիզվող լուրջ պարտաւորութիւնների մասին և ապա շնորհաւորել նրա Նոր-Տարին:

Շնորհաւոր Նոր-Տարի՝ նոր եռանդով և ոյժով գործելու մեր բաղձացած կեանքի վերակազմութեան և վերանորոգութեան համար:

Ա. Քալանթար

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՓՈԽԱՐՔԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

II

Անցեալ անգամ հաղորդեցինք, որ հայ, թուրք, վրացի ներկայացուցիչները իրանց բացատրութիւնները տալուց յետոյ, նախագահի առաջարկութեամբ Փոխարքայի գիւղատնտեսական կառավարիչ Պետերսոն և Անդրկովկասի նահանգապետները կարդացին տեղեկագիր թէ նահանգների դրութեան մասին և թէ ինչ է արված մինչև այժմ կառավարութեան կողմից այն տեղերի համար, ուր սուր կարիք կայ: Պետերսոն յայտնեց, որ Նոր-Բայազէտի գաւառի համար որոշված է բաց թողնել առայժմ 102,000 րուբլի և դրա մի մասն էլ արդէն գործադրված է:

Նախագահը առաջարկում է ագրոնոմներին և անասնաբոյժերին տեղեկութիւններ տալ երկրի գիւղատնտեսական և անասնապահական դրութեան մասին, ցոյց տալու համար, թէ որքան ճիշտ են հայ պատգամաւորութեան ներկայացրած տեղեկագրի ցուցմունքները, որ շատ տեղերում բերքը վատ է և տաւարի կոտորած է եղել:

Գիւղատնտեսական տեսուչ Վասիլէվ յայտնում է, որ տեղեկութիւններ բերքի մասին չը կան և նա չէ կարող տալ: Անասնաբուժութեան կառավարիչ Զօլոտարէվ յայտնում է, որ իր ունեցած և հաւաքած տեղեկութիւնների համաձայն թէ Թիֆլիսի (Բորչալուի գաւառ) և թէ Գանձակի նահանգում (Ղազախի գ.), անասունների հիւանդութիւն կամ ժանտախտ շատ քիչ է եղել և տաւարի կոտորածը աննշան տոկոս է կազմում. օրինակ, Ղազախի գաւառում հիւանդութիւն եղել է միայն 34 գիւղերում և 17,500 ոչխարից սատկել են միայն 524-ը: Առհասարակ էպիզօոտիան շատ քիչ տոկոս է տուել այս տարի և այն շրջանում, որի վրա մատնացոյց է լինում պատգամաւորութեան տեղեկագիրը. հազիւ 1200 անասունի կորուստ լինի:

Քալանթար յայտնում է, որ այդ տեղեկութիւնները բոլորովին անճիշտ են: Նա ցոյց է տալիս, որ շատ տեղերում անասունների կեր և խոտ չը լինելու պատճառով գիւղական ժողովուրդը ստիպված է եղել շատ չնչին գնով ծախել իր տաւարը և ոչխարը: Նրա տեղեկութիւններով մօտ 150,000 ոչխար է փչացել գարնանը զանազան ախտերից և սպետիցեմիա կոչված հիւանդութիւնից, իսկ Զօլոտարէվը ցոյց է տալիս 1200 հատ:

Գանձակի նահանգապետը յայտնում է, որ իր տեղեկութիւններով Գանձակի նահանգում կոտորվել է 32,000: Յամենայն դէպս ապացուցանվում է, որ անասնաբուժական վարչութեան տեղեկութիւնները անճիշտ են:

Ապա տեղեկութիւններ են հաղորդում հարկային տեսուչները, որոնք մանաւանդ Ալէքսանդրօպոլի հարկային տեսուչը, աշխատում են ցոյց տալ, որ պատգամաւորութեան տեղեկագրի ցուցմունքները չափազանցված են, մանաւանդ Ալէքսանդրօպոլ գաւառի վերաբերմամբ և թէ, առհասարակ, շատ տեղերում բերքը այս տարի լաւ է եղել և սուր կարիք կամ սով չը կայ:

Ս. Յարութիւնեան առարկելով, ասում է, որ պատգամաւորութեան գլխաւոր նպատակն եղել է, ներկայացնելով զեկուցագիրը, ցոյց տալ, որ երկրում սով կայ, որպէսզի կառավարութիւնը օգնութեան հասնէ: Թէ արդարև, սով և սուր կարիք կայ, այդ հաստատելու համար կայ մի օբեկտիվ եղանակ, այն է հետաքրքրվել և իմանալ, թէ այս տարի դրսից՝ Ռուսաստանից որքան ցորեն է ներմուծվել Անդրկովկաս: Ոչ մի տարի այնքան ցորեն չէ բերվել Ռուսաստանից, որքան այս տարի, իսկ դա ցոյց է տալիս, որ երկրի բերքը լաւ չէ եղել և հացի մեծ կարօտութիւն կայ:

Պետերսոն և Ջունկովսկի քննութեան են ենթարկում այն հարցը, թէ պատգամաւորութեան զեկուցագիրը ինչ մեթօդով է կազմված և որքան այդ մեթօդը կարող է ճշգրիտ տեղեկութիւններ տալ: Կազմված է նա կաբինէտային, սովորական—բիւրօկրատական եղանակով, թէ տեղն ու տեղը կատարված ուսումնասիրութեամբ:

Հայ ներկայացուցիչները լիակատար տեղեկութիւններ են հաղորդում՝ թէ ինչ ձևով են հաւաքվել տեղեկութիւնները:

Ապա տալիս է իր զեկուցումը Երևանի նահանգապետ Տեզէնհաուզէնը, թէ ինչ կարիքներ ունի իր նահանգը:

Հ. Ա.

(Կը շարունակուի)

ՕԳՆՈՒԹԻՒՆ ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻՆ

Թիւրքահայերին ի նպաստ կազմված Հանգանակիչ Մասնաժողովի և մեր խմբագրութեան կոչերը՝ օգնութեան հասնել սովատանջ թիւրքահայերին՝ ունեցան իրանց հետևանքը: Թէ Մասնաժողովը և թէ «Մշակի» խմբագրութիւնը սկսել են հետզհետէ ստանալ նուէրներ:

Մենք յոյս ունենք, որ հայ հասարակութիւնը նոյն չափով և եռանդով կօգնէ Հանգանակիչ Մասնաժողովին և կը թեթևացնէ թիւրքահայ մեր եղբայրների աղէտալի դրութիւնը, ինչպէս նա օգնեց Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովին և ամոքեց Անդրկովկասի աղէտեալ հայ ժողովրդի ցաւերը:

Ժողովրդի տուած լումաները վերջ ի վերջոյ կը կազմեն մի պատկառելի գումար, որով Հանգանակիչ Մասնաժողովը կարող է մի էական օգնութիւն հասցնել թիւրքահայերին: Ներկայումս հայ ժողովուրդը Թիւրքիայում տանջվում է սովից. մեր առաջին պարտականութիւնն է գոհացնել նրա այդ սուր կարիքը և ապա մտածել ուրիշ կարիքների մասին:

Հ. Ա.

Ս. ՇԱՀԱԶԻԶԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Բաթումից դեկտեմբերի 29-ին ուղարկվեց Մոսկվա կարգադրիչ յանձնաժողովի անդամ Բարխուդարեանցի անունով հետևեալ հեռագիրը.

«Խորին տխրութեամբ համակված, ողբում ենք մեր նշանաւոր բանաստեղծ հրապարակախօս Սմբատ Շահազիզի վախճանը: Փոխանակ պսակի՝ սրա արժէքը նուիրվում է թիւրքահայ սովեալներին:

Ստորագրողների կողմից՝

Աւագ-քահանայ Մելեան, Սարգիս Կարապետեան

—

«Մշակի» անունով ուղարկել են հետևեալ հեռագիրը Ղուբայից.

«Ղուբայի հայ հասարակութիւնը իր խորին ցաւակցութիւնն է յայտնում «Լևոնի վշտի» տաղանդաւոր և շնորհալի հեղինակ՝ Սմբատ Շահազիզի մահվան առիթով:

«Այսօր, դեկտեմբերի 30-ին, հայերի ներկայութեամբ հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Պերճ Պռօշեանի և Սմբատ Շահազիզի յիշատակին»:

Հասարակութեան ներկայացուցիչներ՝

Քահանայ Փանեան, Ամիրջանեան, Գասպարեան, Բաբայեան, Աւագեան, Բարսեղեան, Վալասեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Լրագիրները արդէն հաղորդեցին, որ պրոֆ. Մառը կարդաց Բագւում երեք դասախօսութիւն Անիի պեղումների արդիւնքների մասին: Պէտք է զարմանալ, որ պրոֆ. շատ չնչին նիւթական միջոցներով ահագին աշխատանք է կատարել: Հազիւ տասնեակ հազար րուբլի ստացած լինի պրոֆէսորը, բայց նրա անձնուէր աշխատանքի շնորհիւ մենք ունենք արդէն ոչ միայն հայոց արուեստագիտութեան վրա լոյս սփռող թանգագին տեղեկութիւններ, այլև հայոց պատմութեան զանազան խնդիրների նոր լուսաբանութիւն:

Պրոֆէսորը կարդաց իր դասախօսութիւնները դեկտ. 21, 22 և 23-ին: Այս դասախօսութիւնների բովանդակութեան մասին մանրամասն զեկուցում գրելը շատ դժուար է, որովհետև պէտք է ձեռքի տակ ունենալ իսկական գրուածքը: Սակայն մի քանի ընդհանուր տեղեկութիւններ աւելորդ չի լինի մեր ընթերցողների համար:

Նախ պրոֆ. Մառը շեշտեց, որ Անիի պեղումները յայտնի ապացոյցներ են տալիս, որ հայկական արուեստը ազդեցութիւն է ունեցել և եւրօպական գեղարուեստի զարգացման գործում: Բացի դրանից պրօֆէսորը առանձնապէս յիշատակեց, որ նոյնիսկ մահմեդական և ուրիշ ազգերի շինած կոթողների վրա աշխատել են հայ արհեստաւորներ: Ուշադրութեան արժանի է, որ պրոֆէսորը Անիի պեղումներից գալիս է այն եզրակացութեան, որ Անիի անկումից յետոյ, նոյնիսկ 12-րդ և յետագայ դարերում, հայոց արուեստագիտութիւնը աւելի զարգանում է և ոչ թէ դադարում: Այսպիսով քաղաքական իշխանութեան անկումը չէ խանգարում, որ հայ ազգը շարունակէ իր խաղաղ զարգացման ընթացքը և իր հարևան ազգերի հետ նպաստէ երկրի քաղաքակրթութեան գործին: Մի ուրիշ հանգամանք, որ պրոֆէսորի դասախօսութիւնների մէջ աչքի է ընկնում, այն է, որ պեղումները տուել են հայ իշխանների տան կահկարասիքի մնացորդներ, որպէս և Անի քաղաքի հասարակ քաղաքացիների տան ամաններ: Այս գիւտերը ապացուցանում են,—ասաց պրոֆէսորը,—որ հայ իշխանական դասակարգի նիստ ու կացը բուն հայկական և ժողովրդական կնիք չէ ունեցել, այլ լեզուով և սովորութիւններով աւելի օտարամոլ է եղել: Հայ իշխանները և թագաւորները աւելի բիւզանդական, արաբական, վրացական կամ թիւրքական իշխաններ են եղել իրանց լեզուով ու առօրեայ սովորութիւններով, քան թէ հայ մարդիկ: Ցանկալի է, ի հարկէ, որ յարգելի պրոֆէսորի դասախօսութիւնը ամբողջապէս լոյս տեսնի, որ ընթերցողների համար վերին աստիճանի շահեկան մտաւոր նիւթ լինի:

Բագւի կուլտուրական միութեան նախաձեռնութեամբ այս դասախօսութիւնները ոչ միայն հոգեկան և մտաւոր մխիթարութիւն պատճառեցին Բագւի հայ հասարակութեան, այլ և պրոֆ. Մառի գործի աջակցութեան շատ նպաստեցին: Բացի այն, որ դասախօսութիւնները տուեցին մաքուր արդիւնք մինչև երկու հազար րուբլի, «Արամազդ» ընկերութեան ներկայացուցիչ պ. Վաչեանը հաղորդեց, որ ընկերութիւնը երեք հազար րուբլի է դնում պրոֆէսորի տրամադրութեան տակ. պրոֆէսորի պատուին տրված ճաշի ժամանակ էլ հաւաքվեց 1400 րուբլի:

Պէտք է ցանկալ, որ բագուեցիների ուշադիր վերաբերմունքը պրոֆ. Մառի աշխատանքներին բարի օրինակ լինի և ուրիշ քաղաքների հասարակութիւնների համար:

Գ. Ենգիբարեան

ՏԱՌԱՆՔԻ ԱՇԽԱՐՀԻՑ

Նոր-Բայազէտ, 20 դեկտեմբերի

Ինչպէս յայտնի է, կառավարութիւնը որպէս նպաստ տուել է Նոր-Բայազէտի գաւառին 102,044 ր.: Այդ գումարի մի փոքր մասը, Երևանի նահանգապետի կարգադրութեան համաձայն, յատկացված էր կարօտեալներին շուտափոյթ օգնութեան հասնելու գործին՝ ալիւր բաժանելով նրանց: Իսկ մնացեալ գումարը յատկացվել էր ալիւր և սերմացու ցորեն բերել տալու հարցին: Տեղիս գաւառական մասնաժողովը կայացրել էր հետևեալ վճիռը և ներկայացրել Երևանի նահանգապետի հաստատութեանը.—Ուտելիքի համար սահմանված գումարը պակասեցնել՝ աւելացնելով դրա փոխարէն սերմացուի գումարը: Եւ այդ՝ այս ձևով. քաղաքիս և շրջակայ 10 գիւղերի ուտեստի համար յատկացնել 2744 ր. 80 կ., իսկ սերմացուի՝ 74,599 ր. 20 կ.:

Նահանգապետը հաստատել էր այդ վճիռը, իր կողմից առաջարկելով գաւառապետին, որպէս զի սա անպատճառ պայմանաւորվի վստահելի ալիւրավաճառների հետ, և ապա դրանց միջոցով ցորեն և ալիւր մատակարարվի: Սերմացուն, ըստ նահանգապետի առաջարկութեան, պիտի անպատճառ դրսից բերել տալ, այլապէս կարող է մեր հրապարակի ցորենը պակասել և, դրա անմիջական հետևանքով, ալիւրի գինը բարձրանալ անսահման չափերի:

Իմանալու համար, թէ որտեղի սերմացուն աւելի նպատակայարմար է գաւառիս կլիմային, մեր գաւառապետը դիմեց Թիֆլիսի՝ գիւղատնտեսական ընկ. վարչութեանը, որից պատասխան ստացվեց, թէ տեղական ցորենը չը պիտի վաճառել կամ յատկացնել ուտելու, այլ միմիայն սերմացուի համար պահել, իսկ ուտելու համար դրսից ցորեն գնել:

Գիւղատնտեսական ընկերութեան այդ խորհուրդը հէնց որ ստացվեց, տեղական մասնաժողովը վճռեց Արմաւիրից անմիջապէս ցորեն բերել տալ և բաժանել սերմացուի կարիք ունեցող շինականներին՝ խորհուրդ տալով նրանց, որ այդ ցորենը փոխանակեն իրանց այն հարևանների հետ, որոնք տեղական սերմացուի ցորեն ունենն:

Ցորենի և ալիւրի մատակարարութեան հոգսը կապելով իրանց վրա վերջերս տեղիս յայտնի ալիւրավաճառներ Հայրապետ Խաչատրեանը և «Աբեշատեան և Բոչարեան» ֆիրման: Կապալառուները յատուկ պայմանագրով և դրամական գրաւականով պարտաւորվեցին մի փութ ալիւրը 2 ր. 14 կոպէկով հասցնել շրջանիս մինչև կարիքաւոր գիւղերը, իսկ մի փութ ցորենը՝ 2 ր. $3\frac{1}{2}$ կ.:

Ս. Տ.-Պ.

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԶՂՋՈՒՄԸ

«Մշակը» իր էջերում շատ անգամ է արձանագրել գաղթականութեան վատ և աւերիչ հետևանքը. նա յորդորել է կապվել գաւառի հետ, որ և է ձեռնարկութիւն, գործ ստեղծել գիւղում և ապրել այնտեղ:

Այժմ էլ Թուրք-հայկական կռիւներից առաջացած ծանր և դժուարին կացութիւնն է ստիպել գաղթականութեան մեծ ծաւալ ընդունելու, և այդ ցաւով վարակված է ընդհարումների ասպարէզ եղած Զանգեզուրի, Ղափանի, Սիսիանի, Վարանդայի և Դիզակի հայ գիւղացիութիւնը:

Բանուորներ, բարտաշներ, առանձնագործներ, որմնադիրներ, իրանց կին, երեխայ վերցրած, այս ու այն կողմն են ցրվել, մի կտոր հաց, մի աշխատանքի միջոց գտնելու յուսով:

Սակայն ինչ կեանք ունեն նրանք քաղաքներում. նոյն դառն քրտինքը, չարքաշ նեղութեամբ շրջապատված օրերն են նրանց առաջ: Եւ բաւական է մի օրինակ բերել, որից մարդ կը տեսնի նրանց հառաչանքը, ախը և սրտանց զղջումը. զղջում են նրանք, որ թողին հնացած հայրենական տնից, պապական օջախից:

Պատշգամբում տախտակ սղոցող ծերունի գիւղացուն մօտենում՝ հարցնում եմ.

— Ապէր, էդ տախտակը ինչ ես կըտրելու:

— Քը մատաղ, վարժապետ, մերն ալ էս ա վճակված, հէնց սնիմ, պէտամ ա տանիմ,—պատասխանում է:

— Պէտամ ա տանիմ,—կրկնում է շարունակում եմ ես.—ախր խե՞ Թողեցիր է՞, խե՞ Թողեցիր ձեր շէնը ու եկեր:

— Է՞հ, վարժապետ, ցաւերս տիրուր [illegible] մառաղ. էն հորաքը (ուրագ) վ[illegible] կխսաւս եկ է, կխսաւս: Ա՜խ, Կաղիրծ, Կաղիրծ...—հառաչում է:

— Հա, ապէր, տեսնաս մէկէկ գիլափլուեցիք հմէնց ըն ձեզ նհետ,—հարցնում եմ:

— Ա՜խ, յոր ա, մինը էս սհաթին պըտտոհի՝ ճակատը կը պաչիմ. հայ գիդի հա՜. վարժապետ, քինում ի մին տեղ ա ցորենը պերում, մին շէնայ նիսիէքս հըլաքում, էն մըն շէնան պուրթ, պանիր, տէս-տէն... մին խօսքով թագաւորի կեանք օնէի. ամմա ըստեղ մեռնըմ ընք, ոչ թէ ապրում. ըստեղ կեանք չը կայ:

— Ապէր, ուրեմն փոշմանել ը՞ս, որ եկալ ըս ըստեղ,—հարցնում եմ:

— Վարժապետ, բա խի խօսքը կասի՞ն. լափ ինձ մորթում ըս, մորթում: Ցորա, մին 80 կամ 100 մանէթ փոլ ինկնի ձեռքըս, տես ինձ ըստեղ տեմնում ըս. խոխա-ըրախայ կը հուաքիմ՝ մեր վաթանը թռչիմ: Է՞հ վարժապետ, քեզ ալ կխըցաւանք ըմ տամ. քինի, քինի խոխորցը տասս տօ, համ էլ քարոզի, որ իրանց վաթանը մոռանան ոչ հա՜. ինձ նման քըրքըար կինգնին,—պատասխանում է և մեղմօրէն հը՜, հը՜, հը՜ ժպտում է գլուխը կախած ու հառաչում:

Եւ այսօրինակ զղջում դուք կը նկատէք ամէն տեղ, ամէն մի քայլափոխում. մարդիկ քաղաքում ստիպված են ջրի, բնակարանի, վառելափայտի փող վճարելու, մի ծախք, որ իր օրում Ղարաբաղի գիւղացին չէ տեսել. սրան աւելացրէք և միւս ծախսերը և կը ստացվի մի քամինելի, մի աննախանձելի կեանք:

Եւ հայ լրագրութեան սրբազան պարտականութիւնն է կոչ անել՝ տուն տեղ թողած, օտար երկիր մեկնած գիւղացիներին դէպի իրանց բնիկ օջախը հրաւիրել՝ շէնցնելու ամայի գիւղերը:

Սագանդարեան

Դերբենդ

ՍԱԹԵՆԻԿ ՋՄՇԿԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Կիրակի, ամսիս 30-ին, Մողնու ս. Գէորգ եկեղեցում կատարվեց տիկին Սաթենիկ Ջմշկեանի յուղարկաւորութեան հանդէսը: Պատարագից յետոյ դերասանական խումբը իր ուսերի վրա դուրս բերեց դագաղը եկեղեցու բակը և հանդիսատ դրեց: Բագուի կուլտուրական միութեան պատգամաւոր պ. Գարեգին Երիցեան կարճ խօսքով յայտնելով միութեան թախիծը երախտաշատ դերասանուհու մահվան մասին, Նրա խորին յարգանքի նշանը հանգուցեալի յիշատակին դնում է նրա դագաղի վրա մի պսակ: Պսակ է մատուցվում Նաև դրամատիկ ընկերութեան և դերասանական խմբի կողմից:

Պ. Երիցեանից յետոյ խօսում է դերասան պ. Վրոյր, որ գեղեցիկ և ամփոփ արտա[illegible]ցնում [illegible] հայ անդրանիկ դերասանուհու երկսեռ[illegible] բեմի, հասարակական այդ գեղարուեստայի[illegible] թատրոնի վրա, պատառելով նախապաշարումը, որ փակում էր կնոջ հանդէպ հասարակական գործունէութիւնը, և այն՝ մանաւանդ՝ Թատրոնի բեմի վրա:

Երրորդ խօսողը հանդիսանում է դերասան պ. Յարութիւնեան, որ նոյնպէս ազդու արտասանութեամբ արծարծում է մօտաւորապէս նոյն միտքը, որ իր նախորդը հանդիսացրեց:

Գերեզմանի վրա խօսեց պ. Մակար Ջմշկեան:

Այսպէս համեստ և բարեպաշտօն յուղարկաւորութեամբ անցաւ մտաւ յաւիտենի հանգիստը անդրանիկ շնորհալի դերասանուհին՝ տիկին Սաթենիկ Ջմշկեան, որի անունը արտասանվում էր անցեալ դարի վերջին կիսում ամէն տեղ մեր երկրում և միշտ համակրութեամբ:

Ա. Ե.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Դեկտեմբերի 29-ին Մոսկվայում բացվում է խաղաղ վերանորոգչականների կուսակցութեան խորհրդաժողովը, Նորակազմ առաջադէմ խմբակի ներկայացուցիչների մասնակցութեամբ, քննելու մի շարք հարցեր, որոնք վերաբերում են կուսակցութեան անդամների գործունէութեան Պետական Դումայում: Այն հիմնական հարցը, որ գլխաւորապէս քննութեան պիտի ենթարկի խորհրդաժողովը, դա հոկտեմբերականների հետ համաձայնութիւն կայացնելու հարցն է Դումայի կենտրոնի կուսակցութիւն (մեծամասնութիւն) կազմելու համար: Այդ մտքի պաշտպաններից մէկն է Դ. Ն. Շիպովը, մինչդեռ առաջադիմական խմբակի անդամների մեծ մասը, ըստ երևոյթին, մտադիր են հակառակել համաձայնութեան մտքին, գտնելով նրան ներկայումս, երբ հոկտեմբերեանները ձուլված են չափաւոր աջակողմեանների հետ, անընդունելի: Բացարձակ կերպով հրաժարվել չափաւոր-աջակողմեանների բլօկից՝ հոկտեմբերեանները չեն կարող, որովհետև այդ հրաժարականի հետ միաժամանակ Նրանք ստիպված պիտի լինեն խզել իրանց կապը Պետական Խորհրդի կենտրոնից և որովհետև համաձայնութիւնը կայացել է այն պայմանով, որ այդ «երրորդական» միութեան մէջ պիտի անպայման մասնակցեն նաև չափաւոր աջակողմեանները: Հաղորդում են, որ խորհրդաժողովի մի քանի նիստերին մասնակցելու են հոկտեմբերեան լիդերներից Ա. Ի. Գուչկովը, Պետրովօ-Սոլօվօվօն և այլն:

◆ Դեկտեմբերի 20-ին ռուս ժողովրդի միութեան գլխաւոր խորհրդի շինութեան մէջ տեղի է ունեցել խորհրդի անդամների արտակարգ նիստը առաջիկայում միացեալ ռուս ժողովրդի ներկայացուցիչների համագումար հրաւիրելու հարցի առիթով խորհրդակցելու: Վճռված է համագումարին որքան կարելի է մեծ շուք ու հանդիսաւորութիւն տալ և նրա բացմանը հրաւիրել ներկայ գտնվելու հայր Իօանն Կրօնշտադտսկուն: Համագումարի բոլոր ծախսերը, որ մօտաւորապէս 50,000 ռուբլի է նախատեսված, իրանց վրա են առնում իշ. Վօլկօնսկին, կոմս Կ. և մի քանի ուրիշ կալուածատէր անդամներ: Դրամական գործերի խնդիրը վերջանալուց յետոյ դիմել են «կազմակերպիչ խորհրդի» անդամների ընտրութեան: Ընտրվել են՝ Դուբրօվին, իշ. Վօլկօնսկի, Բուլացել, Դեզօբրի, կոմս Կօնօվիցին և Պուրիշկեվիչ:

◆ Ռուս ժողովրդի միութեան գլխաւոր խորհուրդը շրջաբերականներով առաջարկել է իր գաւառական բաժանմունքներին հսկողութիւն նշանակել հայրենիք վերադարձած պատգամաւորների վրա, մանաւանդ գիւղացիների ու քահանաների վրա, և նրանց նիստ ու կացի ու գործունէութեան մասին մանրամասն կերպով զեկուցանել միութեան գլխաւոր խորհրդին: Այդ բոլոր «տեղեկութիւնները» միութեան պարագլուխները հաւաքում են այն նպատակով, որպէսզի Պետական Դումայում հարց զարթեցնեն հակակառավարչական ճառեր արտասանելու համար պատգամաւորներին պատասխանատւութեան ենթարկելու կարգ սահմանելու մասին:

ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻՑ

VIII

Առաջին Պետական Դումայի 169 պատգամաւորների դէմ սկսված դատավարութիւնը, որի ելքեան մասին արդէն գիտեն ընթերցողները, վերջացաւ նրանով, որ մեղադրվողներից երկուսը միայն անպարտ ճանաչվեցին, իսկ 167 հոգին մեղաւոր ճանաչվեցին և դատապարտվեցին ընդամենը 3 ամսվայ բանտարկութեան: Իսկապէս, դա ճիշտ այն է, ինչ որ ասում են՝ «լեռը ծնաւ մի մուկ»:

Եւ յիրաւի, խնդիրը այնչափ ուռեցնելուց, այնչափ աղմուկ և իրարանցում բարձրացնելուց յետոյ, միմիայն երեք ամսվայ բանտարկութեան դատավճիռը աւելի չնչին ու աննշան է, քան թէ նոյնիսկ մի փոքրիկ մուկը:

Պիտի ցանկանա՞ր արդեօք մեր ներկայ կառավարութիւնը այդ փքուն դատաստանական գործը սկսել, եթէ նա առաջուց իմանար, թէ ինչով պիտի վերջանայ այդ գործը: Հազիւ թէ. որովհետև այդ դատավարութիւնը ոչ միայն մազաչափ անգամ նպաստաւոր չեղաւ կառավարութեան համար, այլ և նա առիթ տուեց հակառակ կողմին նորոգել այն շեշտակի ճառուածները, որոնց ծանրութիւնը կարծես թէ վաղուց արդէն մոռացվել էր թէ կառավարութեան և թէ նոյնիսկ հասարակութեան կողմից:

Ճիշտն ասելով, այդ դատավարութիւնը ներկայ քաղաքական անգոյն ու թմրած մթնոլորտի մէջ մի արտասովոր կենդանութիւն և աշխուժութիւն մտցրեց: Կարդալով այդ դատավարութեան ընթացքում արտասանված ճառերը, տեսնելով նրանց ցոյց տուած անվեհերութիւնը, մարդ ակամայից բոլորովին մոռանում էր ներկան, մոռանում էր 3-րդ Պետական Դուման իր անգոյն և հլու պատգամաւորներով և մտքով սլանում ու վերադառնում այն փառաւոր օրերին, երբ այդ ճառերը, այդ շեշտակի հառուածները լսվում էին Տաւրիկեան պալատից: Ճիշտ որ կարելի էր ենթադրել, թէ մենք առաջին «ժողովրդային զայրոյթի» Պետական Դումայի օրերին ենք վերադարձել:

Եւ ինչքա՜ն էր Պետերբուրգի դատաստանական դահլիճը առաջին Դումայի օրով եղած Տաւրիկեան պալատից տարբերվում: Միթէ մեղադրեալների նստարանի վրա նստելը գէթ մազաչափ անգամ փոխե՞լ էր Ռուսաստանի առաջին և իսկական ներկայացուցիչներին: Միթէ Մուրոմցեվ, Պետրունկեւիչ, Վինավէր, Նաբօկօվ, Բարատօվ, Ռամիշվիլի, մեղադրեալների նստարանի վրա նստեցված լինելով, դադարե՞լ էին ժողովրդի ներկայացուցիչները լինելուց: Այդ, գոնէ, բոլորովին չէր երևում նրանց բռնած անվեհեր յարձակողական դիրքից ու նրանց արտասանած ճառերից, որոնք շատ աւելի մեղադրական ակտերի էին նմանում, քան պաշտպանողական ճառերի:

— Ես ներկայանում եմ այստեղ ոչ թէ իբրև մեղադրվող, այլ մեղադրող,—ասում է նախկին պատգամաւոր Բարատովը և կատարեալ շփոթութեան մէջ է գցում դատաստանական նախագահին, որը ի պատասխան այդ խրոխտ խօսքերի հազիւ է կարողանում ցածր ձայնով կմկմալ.

— Իբրև մեղադրողի ես չեմ կարող ձեզ խօսք տալ:

Բայց Բարատովը չը լսել է ձևանում և իսկական մեղադրողի շեշտով շարունակում է.

— Առաջին Պետական Դումային ղեկավարող միակ գաղափարը Ռուսաստանի բարօրութիւնն էր: Եւ ահա յուլիսի 9-ին կամեցան կտրել այն զէնքը, որով յոյս կար ժողովրդի համար բարօրութիւն ստեղծել: Սակայն հեռու չէ այն ժամանակը, երբ այս մեղադրեալների նստարանի վրա նստողները ոչ թէ մենք կը լինենք, այլ մեր հակառակորդները...

— Ինչո՞ւ համար ենք մենք դատի ենթարկված,—հարցնում է մեղադրվող պատգամաւորներից մի ուրիշը՝ պ. Իշերսկի:—Նրա համար, որ մենք մեր հասկացած ձևով, միացած ժողովրդի հետ, նրա հետ միասին կռիւ էինք մղում յանուն ժողովրդի իրաւունքների: Մենք այդ կռուի մէջ ժողովրդին տալիս էինք մեր բոլոր ընդունակութիւնները, մեր եռանդն ու մեր հոգին: Իսկ կառավարութիւնը, օգտվելով իր ոյժից, մեզ այս նստարանների վրա նստացրեց և ձեր դատաստանին յանձնեց: Դուք թշնամի բանակի ներկայացուցիչներն էք, դուք պատերազմող կողմերից մէկն էք: Դուք ստոլիպինեան 130,000 կալուածատէրերի, ժողովրդի թշնամիների ու նրանց շահերի պաշտպաններն էք...

— Խօսելով այս սրահի մէջ, դատաւորների առաջ,—ասում ու կրկնում են մեղադրվող նախկին պատգամաւորներից շատերը,—մենք, իրապէս, կամենում ենք միայն հաշիւ տալ մեզ ընտրողներին, որովհետև այս առաջին անգամն է, երբ մենք, վերջապէս, հնարաւորութիւն ունենք հրապարակով հաշիւ տալ. հետևապէս ուրախութեամբ մենք օգտվում ենք մեզ ներկայացված առիթից:

Եւ նրանք օգտվեցին այդ առիթից, առատութեամբ օգտվեցին ու հաշիւ ներկայացրին ոչ միայն իրանց ընտրողներին, այլ և ամբողջ Ռուսաստանին, ամբողջ քաղաքակիրթ աշխարհին իրանց գործունէութեան և մանաւանդ այն խղդիչ պայմանների մասին, որոնցով այն ժամանակվայ մինիստրութիւնը կաշկանդել էր առաջին Պետական Դուման:

Շատ ու շատ նշանաւոր յայտնութիւններ արեցին մեղադրվող պատգամաւորները, բայց ամենից բնորոշն ու հետաքրքրականը առաջին Դումայի նախագահ Մուրոմցեվի արած յայտնութիւններն էին:

Բանից դուրս է գալիս, որ առաջին Պետական Դուման գումարվելուց հազիւ մի քանի օր անցած՝ մինիստր-նախագահը առաջարկել էր Մուրոմցեվին արձակուրդ տալ Դումային, ասելով, որ պ. պ. չինովնիկները առհասարակ սովոր չեն ամառվայ ամիսներին աշխատել, ուստի աւելի լաւ է որ արձակուրդ տրվի և աշնանը միայն սկսեն աշխատել: Մուրոմցեվից այդ մասին մերժում ստանալով, ամբողջ աշխարհի առաջ Պետական Դուման աշխատանքի անընդունակ յայտարարող մինիստր-նախագահը խոստովանվում է Մուրոմցեվին, թէ մինիստրութիւնը դեռ ևս ոչ մի օրինագիծ չունի պատրաստած Դումային առաջարկելու համար, ուստի նա այդ արձակուրդը մասամբ էլ ցանկանում է հէնց նրա համար, որ մինիստրութիւնը միջոց ունենայ օրինագծեր պատրաստելու: Պետական Դումայի նախագահից երկրորդ անգամ մերժում ստանալուց յետոյ է, որ նեղը ընկած մինիստրութիւնը, աշխատանքի անընդունակ չերևալու համար, Դումայի քննութեանն էր առաջարկել Իւրիեվի համալսարանում լուացարան շինելու օրէնքը (?!), որ իր ժամանակին ամբողջ աշխարհի ծաղրին արժանացաւ:

Այդ դեռ բաւական չէ, Մուրոմցեվի արած յայտնութիւններից իմանում ենք, որ առաջին Դումայի գումարման հէնց առաջին օրից ստոլիպինեան 130,000 կալուածատէրերից, որոնց ներկայացուցիչները «ընդհովանեօք» կառավարութեան այսօր 3-րդ Դումայի ծաղիկներն են կազմում, անհամար քանակութեամբ սպառնական նամակներ են ստացվել Մուրոմցեվի հասցէով, որոնցով աղա կալուածատէրերը պահանջելիս են եղել՝ հրաժարվել ագրարային հարցը լուծելու այն ծրագրից, որ քննվում էր առաջին Պետական Դումայում:

Ոչ պակաս բնորոշ ու հետաքրքրական է Մուրոմցեվի արած երրորդ յայտնութիւնը. ճիշտ այն ժամանակ, երբ կառավարութիւնը առաջին Դումայի ճակատագիրն է որոշում ու նրան ցրելու մասին է մտածում, ճիշտ այդ ժամանակ, ասում ենք, մինիստր-նախագահ Գօլօվինը խնդրում է Դումայի նախագահից՝ յայտնել պատգամաւորներին, որ յուլիսի 10-ի Դումայի նիստում ինքը մինիստրը առաջարկութիւն ունի անելիք, այն ինչ յուլիսի 8-ին արդէն Տաւրիկեան պալատի դռները կողպված էին և Դուման արձակված...

Ի՞նչ կարելի է եզրակացնել Գօլօվինի այդ վարմունքից: Անշուշտ՝ կամ այն, որ նա կամեցել էր Մուրոմցևի աչքերին թոզ փչել, և կամ թէ նա այն աստիճան անտեղեակ էր իր շուրջը կատարվող անց ու դարձերի մասին, որ ինքն էլ չէր իմանում, թէ այսօր-վաղը Դուման ցրելու են: Երկու պարագան էլ, յամենայն դէպս, բոլորովին վայել չեն մինիստր-նախագահի դիրքին ու արժանապատւութեանը:

Ոչ, նպաստաւոր չէր, բոլորովին նպաստաւոր չէր կառավարութեան համար իր ձեռնարկած դատաստանական քննութիւնը առաջին Դումայի դէմ, մանաւանդ որ լեռը երկար ճռնչաց, բայց վերջում միայն մի մուկ ծնեց: Թէկուզ միմիայն առաջին Դումայի յիշողութիւնները վերակենդանացնելու և բիւրոկրատիայի գէթ մի քանի օրով մերկացնելու համար էլ արժէր երեք ամսով բանտ նստել: Եւ զարմանալի չէ, որ մեղադրվող ժողովրդային ներկայացուցիչները բոլորովին հանգիստ սրտով լսեցին դատարանի վճիռը և, ծիծաղկոտ դէմքով շնորհաւորելով միմեանց, ցրվեցին իրանց տները:

Խ.-Ազատ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Լագօդեխ, 28 դեկտեմբերի

Հինգշաբթի, ամսիս 27-ին, տեղիս սիրողները տուեցին երկրորդ ներկայացում յօգուտ աւանիս հայոց դպրոցի: Ներկայացրին «Սօնայի նշանդրէքը» հեղ. Յար. Եսայեանի, «Վույ քի իմ վէչէր» և վրացերէն լեզուով «Առաջ մեռան, յետոյ պսակվեցին» վօդէվիլները: Խաղը՝ որպէս սիրողների, ընդհանրապէս բաւարար էր. շնորհակալութեան արժանի են տիկնայք՝ Ե. Թումեան, Շ. Սուքիասեան, Ա. Գրիգորեան, Ա. Յակովբեան, Տէր-Պօղոսեան և Շ. Գաբրիէլեան ու պարոնայք՝ Յ. Գրիգորեան, դպիր Մ. Յարութիւնեան, Ա. Դոնժիեվ և Ա. Բալահայրումեան, որոնք չը նայելով տեղական աննպաստ հանգամանքներին՝ օգնում են ներկայացումներին իրանց եռանդուն մասնակցութեամբ: Ներկայացումից մուտք եղաւ 54 ռուբլի:

Դպրոցի գոյութիւնը պահպանելու նպատակով հոգաբարձուներ՝ պ. պ. շտաբս-կապիտան Մ. Ս. Յարութիւնեան և Յ. Թումեան մշտական բեմ շինեցին դպրոցական դահլիճում, որոնք արժանի են շնորհակալութեան, որ այսպիսի յետ ընկած մի աւանում մշտական թատրոն ունենալու բաղդը ունեցանք:

Նոյնպէս շնորհակալութեան արժանի են օֆիցերներ՝ պ. պ. Ա. Մ. Ղորղանեան և Մ. Ս. Յարութիւնեան, որոնք նկարեցին ձրիաբար բեմի գեղեցիկ վարագոյրը և օգնում են ներկայացումներին իրանց մասնակցութեամբ:

Բագրատ քահ. Սուքիասեանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՈՒՍԱԲԵՐ

Նորավէպ

Նահիրեարի

— Եւ դու, իմ իդէալիստ և օպտիմիստ Վաղարշակ, դու դեռ միամտութիւն ունես հաւատալ, որ մեզ համար կը ծագէ մի օր փրկութեան արևը, որ մեզ համար կը լինի նոր օր, Նոր-Տարի:

— Ոչ միայն յոյս ունեմ, որ մի օր կը ծագէ մեզ համար փրկութեան լոյս, այլև հաւակնութիւն ունեմ հաւատալու, որ այդ յոյսը կը ծագէ հէնց վաղվանից, Նոր-Տարուց: Այո, այո, Նոր-Տարի, նոր կեանք հայութեան համար. ես հաւատում եմ ջերմեռանդութեամբ. իսկ, գիտես, կենդանի հաւատը ընդունակ է հրաշքներ գործելու. դու միայն թերահաւատը, իսկ թերահաւատութիւնը ամէն բան մեռցնում է: Հաւատա և կեցցես:

— Բայց որտեղից գտնեմ այդ ջերմեռանդ, այդ կենդանի հաւատը. միթէ մեր հայ իրականութիւնը ներշնչում է այդ հաւատը. տեսնում եմ՝ ամէն կողմ տիրում է խաւար, դժոխք, յուսահատութիւն, լալ և կրճել ատամանց: Չե՞ս լսում դուրսը կատաղի քամու մռնչոցը. Նա բաղխում է մեր դուռը. ահա նա ներս է մտնում. Նա կը ծածկէ ամէն բան. Նա կը սառեցնէ ամէն բան. Նա մահաբեր է:

Վաղարշակը, անհանգստացած, նայեց դէպի դուռը:

Դուրսը, արդարև, փչում էր սաստիկ քամի. դռան ապակեծածկ մասից կարելի էր նկատել, որ քամին բարձրացնելով ձիւնի փոքրիկ սառցակոյտերը՝ վանում էր նրանց այս և այն կողմը: Մութը դեռ չէր կոխել. մօտենում էր աղջամուղջը. երկինքը պատած էր թանձր, գորշ ամպերով և աւելի գորշ էր երևում շրջապատ տների երդիկներից բարձրացած ծուխը:

Կիսամութ սենեակի մէջ, ուր զգալի ցուրտ էր տիրում, արագ-արագ քայլում էր մի ծայրից միւսը Վահանը, երեսուն տարեկան բարձրահասակ, նուրբ դիմագծերով, թուխ մազերով, հայդուկի հագուստով մի երիտասարդ, որի դէմքը, սակայն, թախիծ և յուսահատութիւն էր արտայայտում այդ րոպէին. երևում էր, որ բուռն ներքին յուզմունքներ ցնցում են նրա հոգին, գալարում են նրա աղիքը, որովհետև ամէն րոպէ, մատները մտցնելով խիտ թուխ մազերի մէջ, ապա ծալելով կարծես թէ բռունցքով կամենում էր պոկել նրանց: Երբեմն-երբեմն կանգ էր առնում և աչքերը յառում դիմացի պատին, ուր կախ էին տրված զանազան զէնքեր՝ հրացան, ատրճանակ, թուր:

Վաղարշակը, նա, որին մի փոքր առաջ Վահանը իդէալիստ անուանեց, հանդարտ նստած էր տախտի վրա և հետևում էր իր ընկերոջ անհանգիստ շարժումներին: Նա մի թխադէմ, վայելչակազմ երիտասարդ էր, հազիւ 28—30 տարեկան, շատ պարզ և անպաճոյճ հագնված: Իր հանդարտ, անդորր և զուարթ կերպարանքով, իր մեղմ շարժումներով նա կատարեալ հակապատկեր էր կազմում իր ընկերին, որ հետզհետէ յուզվում և զայրանում էր ու աւելի արագօրէն քայլում սենեակի մէջ, արտասանելով երբեմն կցկտուր խօսքեր, որոնց մէջ անէծք և սպառնալիք էին լսվում, ուղղված անյայտ անձանց հասցէին:

— Ախ, դուք անիծեալներ, նզովից արժանիներ, գեհենի և դժոխքի զաւակներ, դուք կարողացաք կատարել այդ սոսկալի ոճրագործութիւնը: Վրէժ, վրէժ, վրէժ դաւաճաններին:

Եւ Վահանը, կարծես թուլացած՝—յուզմունքի և վրդովման այդ բուռն զեղումից, աւելի ընկաւ, քան նստեց տախտի վրա, Վաղարշակի կողքին, և դէմքը առաւ ձեռների մէջ:

Սենեակի մէջ տիրեց լռութիւն. մութը արդէն ընկել էր, և Վաղարշակը միայն բնազդմամբ զգում էր, որ ընկերը լալիս է: Նա սպասեց, փորձով իմանալով որ վշտի ամոքման ամենալաւ միջոցը՝ լացն է. յետոյ հանդարտ վեր կացաւ, հանեց գրպանից լուցկի, վառեց լամպը, որ դրված էր սենեակի մի անկիւնում գտնվող փոքր սեղանի վրա, և ուղղեց քայլերը դէպի տախտը, երբ, յանկարծ, դուռը մեծ շառաչմամբ բացվեց և բաղխվեց պատին: Սուր և սառն քամու հոսանքը սուլելով խփեց Վաղարշակի և Վահանի երեսին և հանգցրեց լամպը: Վահանը ցնցվեց, ցատքեց ոտքի և գոռաց.

— Այդ ո՞վ է, ի՞նչ կայ:

Եւ վազեց դէպի զէնքը:

— Հանդարտիր, Վահան,—ասաց Վաղարշակը,—ոչ ոք չը կայ. քամին բացեց դուռը և հանգցրեց լամպը:

Եւ, վերկենալով ու փակելով դուռը, նա նորից վառեց լամպը, մօտեցաւ ընկերին, երկու ձեռքը դրեց նրա ուսերին և, ակնապիշ նայելով նրա աչքերին, ասաց.

— Վահան, ի՞նչ է պատահել քեզ, ի՞նչն է քեզ այդքան յուզում, տանջում. արի, նստիր մօտս և պատմիր, թափ տուր ընկերիդ առաջ դարդերդ. գուցէ մի ճար ու դարման կարողանամ անել:

— Ոհ, Վաղարշակ, պատահել է մի մեծ աղէտ, մի սոսկալի վիշտ, որ կրծում, կտոր-կտոր է անում սիրտս. Նրան ճար ու դարման չը կայ: Ես կարող եմ խելագարվել այդ վշտից, յուսահատութիւնից. կեանքը այլ ևս նշանակութիւն և արժէք չունի ինձ համար. դրա համար ես ասում էի քեզ, որ մեզ համար այլ ևս փրկութիւն չը կայ, որ մեզ համար վաղը Նոր-Տարի չէ, այլ նոր ցաւերի, նոր վշտերի, նոր յուսահատութեան տարի:

Վաղարշակը գունատվեց. նրա դէմքից անհետացաւ բարի, հեզահամբոյր ժպիտը. մի սոսկալի կասկած սպրդեց նրա հոգու մէջ: Եւ նա կիսաշունչ հարցրեց.

— Չը լինի՞ նոր կոտորածի լուր էք ստացել Հայաստանից: Ախ, թշուառ, անբաղդ հայ ժողովուրդ. դու դեռ չես քամել դառնութեան բաժակը:

Եւ սկսեց աղի արտասուք թափել:

Այժմ Վահանը սկսեց հանգստացնել նրան:

— Հանդարտվիր, ոչ մի կոտորած չէ պատահել. պատահել է մի ուրիշ աղէտ. սպանվել է մեր հերոսներից մինը անարգ, դաւաճան կերպով և սպանվել է ոչ թէ թշնամու գնդակից, կռուի դաշտի վրա, այլ իր ընկերոջ ձեռքով, մի չնչին պատճառով:

— Ո՞վ է սպանվել,—արդէն մի քիչ հանգստացած՝ հարցրեց Վաղարշակը, սրբելով աչքերը:

— Սաղաթը, Սաղաթն է սպանվել գործարանի բանուորի ձեռքով, այն կորիճը, այն հերոսը, որ այնքան մեծ քաջագործութիւններ կատարեց, այնքան հերոսաբար պաշտպանեց ժողովուրդը ընդհարումների ժամանակ: Ահա, առ, կարդա:

Եւ ծոցի գրպանից հանելով մի նամակ՝ նա մեկնեց Վաղարշակին:

Սա մօտեցաւ լամպին և սկսեց կարդալ:

Քամին շարունակ մռնչում էր դուրսը, սուր սուլոցներ արձակելով:

— Ինչ անիծեալ եղանակ է. կարծես այս անիծեալ տարին իր վերջին շունչն է փչում և փչելուց առաջ կամենում է նորանոր աւերումներ գործել, մռմռաց Վահանը և դարձեալ խորասուզվեց իր տխուր մտածողութիւնների մէջ:

Վաղարշակը մեծ ուշադրութեամբ կարդում էր նամակը. երբ աւարտեց, նրա դէմքը նորից ստացաւ իր մեղմ, հեզ և նախկին համակրական արտայայտութիւնը. մի պայծառ, գեղեցիկ միտք կարծես լուսաւորում էր նրա հոգին և իր շողերը արձակում նրա դէմքի վրա:

Նա մօտեցաւ Վահանին, նստեց նրա կողքին և սկզբում մեղմօրէն, ապա հետզհետէ ոգևորվելով, տաքանալով, խօսեց.

— Լսիր, Վահան, ես կամենում եմ քեզ հետ խօսել լրջօրէն. ես կամենում եմ բանալ քո աչքերը. ես կամենում եմ, չը գիտեմ՝ ինչպէս ասել, մի նոր, բուռն յեղափոխութիւն առաջ բերել քո հոգու մէջ, քո մտքերի մէջ. ես պէտք է ապացուցանեմ, որ դու սխալ, վտանգաւոր հողի վրա ես կանգնած, ծուռ, աղէտալի շաւղով ես ընթանում, շաւիղ, որի մէջ եթէ յարատևելու լինէք դու և քո ընկերները, քո կուսակցութեան մարդիկ, դուք անպայման տանելու էք մեր թշուառ, բազմաչարչար հայ ժողովուրդը

ԹԻՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք. 1) Բաթումից— Մ. Մէբուրնութեանից 3 ր., 2) Վանքից—Խ. Ն. Աւետիսեանից 2 ր. 50 կ., 3) Աստրախանից— Մ. Մելքումեանից 5 ր., 4) Սամարղանդից— Գ. Մելիք-Մկրտչեանից 10 ր., 5) Նոր-Նախիջևանի Թեմական դպրոցի վարչութիւնից, Պօոշեանցի գագաղի վրա պսակ դնելու փոխարէն, 12 րուբլի։

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ ԳԱՒԱՌԻ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք. 1) Բաթումից— Մ. Մէբուրնութեանից 3 ր., 2) Կրասնօվօդսկից — Յ. Խաչատեանի երեխայի մկրտութեան ժամանակ ժողոված 10 րուբլի։

ԿՈՎԿԱՍԻ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք. 1) Աշակերտներ Արտաւազդ և Շահրիար Մ.-Փ.-ից, Նոր-Տարվայ նուէրների փոխարէն, 3 ր., 2) մի տիկնոջից, որ կամեցաւ անյայտ մնալ, 10 ր., 3) Բաթումից—Մ. Մէբուրնութեանից 3 ր., 4) Վանքից —Խ. Ն. Աւետիսեանից 2 ր. 50 կ., 5) Բագուից—Հայրապետ Զալեանցի պսակադրութեան հանդիսում ժողոված, Ա. Յարութիւնեանի միջոցով, 6 ր. 40 կ., 6) Վաննօվսկայա կայարանից—Ն. Արուստամեանից 5 րուբլի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ «Մշակի» հետևեալ համարը լոյս կը տեսնի ամսիս 3-ին, հինգշաբթի օրը։

◆ Թէև վերջին երկու տարիներս Յորդանան չէր լինում, բայց այս տարի կը լինի, միայն ոչ Կուր գետի ափին։ Քաղաքային վարչութեան անդամ բժ. Խատիսեանը առաջարկել է Յորդանանը շինել Ալէքսանդրեան այգում։

◆ Կոմսուհի Ե. Ա. Վօրօնցօվա-Դաշկօվան Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուին 500 րուբլի է յանձնել, որպէսզի այդ գումարից տրվի Թիֆլիսի գիմնազիաների աղքատ աշակերտների և աշակերտուհիների ուսման վճարը։

◆ Դեկտ. 30-ին, Թիֆլիսի ժողովարանում, յօգուտ Թիֆլիսի նորաբաց կրթական-ջուլհականոցի կայացաւ տօնածառ-պարահանդէս բազմակողմանի ծրագրով։ Սկզբում հասարակութեան մեծ զուարճութիւն պատճառեցին երեխաները, որոնք յատուկ այդ օրվայ համար սովորել էին մի քանի պարեր և հագած ունէին Լիւդովիկոս XV-րդի ժամանակվայ զգեստներ։ Երկրորդ բաժինը, ժամը 10-ից յետոյ, հասակաւորների համար էր։ Դահլիճում ցուցադրված էին արհեստանոցի արդիւնքները, որոնց խրաքանչիւրի մասին ամփոփ տեղեկութիւն էր տալիս ընկերութեան վարչութեան նախագահ Ա. Քալանթար։ Շատ վաճառականներ որոշ եզրակացութեան եկան մի քանի գործուածքների վերաբերութեամբ, որոնց կարելի է դիւրութեամբ վաճառքի հանել ընդհանուր շուկայում։ Ամբողջ երեկոն, որ տևեց մինչև գիշերվայ ժամը մօտ 4-ը, շատ հաճելի տպաւորութիւն թողեց բոլորի վրա և անցաւ կենդանի ու ուրախ։ Հասոյթը դեռ յայտնի չէ։

◆ Դեկտ. 30-ին, երեկ. ժամը 6-ին, 1-ին հրացանաձիգ զօրաբանակի զօրանոցի մօտ, ոչ հեռու վառօդի պահեստից, պայթեց մի ռումբ, որից սպանվեց ռումբ տանողը, որը հաւանօրէն վայր է ընկնում։ Սպանվածի գրպաններում գտնվեցին երկու անցաթղթեր, մէկը Գօրու գաւառի գիւղացի Աբբաս Աբբասիձէի անունով, իսկ միւսը՝ Վլադիմիր Ցիւրգալաշվիլու անունով։ Սպանվածի դիակը ուղարկված է հիւանդանոց։

◆ Կովկասեան կայսերական բժշկական ընկերութեան նախաձեռնութեամբ կազմակերպված է հասարակական դասախօսութիւնների մի ամբողջ շարք բժշկութեան մասին։ Այսպէս՝ դեկտեմբերի 30-ին կայացաւ բժ. Զավրիեվի դասախօսութիւնը «դողերոցքի» մասին։ Դասախօսը, հիմնական բացատրութիւնից յետոյ, շատ հետաքրքրական եզրակացութիւններ արեց. երևում է, որ ընդհանուր Ռուսաստանում ամենայն օր դողերոցքով հիւանդանում են մօտ 5 միլիօն հոգի և եթէ դողերոցքի (մալիարիա, ջերմախտ) վնասները փողի վերածելու լինենք, կերևայ, որ ամեն տարի խինինի վրա ծախս է լինում 1,250,000 ր., հիւանդների բժշկութիւնը նստում է 175,000 ր., բանւորական ժամանակի կորուստ լինում է 5,250,000 ր., ընդհանուր առմամբ դողերոցքի հասցրած վնասը հասնում է տարեկան 5,550,000 ր.։ Ապա յարգելի բժիշկը ցոյց տուեց այն միջոցները, որոնցով կարելի է հեռու մնալ դողերոցքից. 1) անհրաժեշտ է չորացնել ճահիճները. 2) ազգաբնակութեանը տալ ձրի բժշկական օգնութիւն և ձրիապէս տալ խինին. 3) բարձրացնել ժողովրդի բարեկեցութիւնը և լուսաւորութիւնը, որովհետև միայն գրագէտ մարդը գիտակցաբար կարող է կռւել ժողովրդական հիւանդութիւնների դէմ։ Դասախօսութիւնից յետոյ, սրահը լցված մեծ թւով լսողները դասախօսին վարձատրեցին բուռն ծափահարութիւններով։

◆ Այսօր, յունվարի 1-ին, առաւօտեան ժամը 11-ին, ժողովրդական համալսարանում Ն. Ս. Դերժավինը կը դասախօսէ «Լէօնիդ Անդրէև» թեմայով։

◆ Վաղը, յունվարի 2-ին, երեկ. ժամը 6—8, կովկասագիտական բարձր դասընթացքներում (Ալէքսանդրեան այգի) պրօֆ. Ա. Խախանովը կը կարդայ իր 5-րդ և 6-րդ դասախօսութիւնները վրաց գրականութեան մասին։ Դասախօսութիւնները գրաւում են բազմաթիւ ունկնդիրներ։

◆ Կովկասեան զինւորական-դատարանը մահվան է դատապարտել Իվան Վարդանաշվիլուն սպանութեան համար։ Գանձակի ժամ. գեն.-նահանգապետը վեց թուրքերի մահվան պատիժը փոխարինել է աքսորով։

◆ Ի նկատի ունենալով որ համարեա համատարած Ռուսաստանում խոլերան դադարել է, ժամանակաւորապէս փակել են այն պատուաստման կայարանը, որ հաստատեց Կովկասի բժշկական ընկերութիւնը։ Հակախոլերային սրսկում տեղի կունենայ՝ հէնց որ Կովկասի որևէ տեղում խոլերա կերևայ։

◆ Գ. Իվ. Մաչավարիանին դիմել է Թիֆլիսի նահանգապետին, խնդրելով թոյլատրել հրատարակել Թիֆլիսում քաղաքական և գրական օրաթերթ վրացերէն լեզուով «Դասածկիսի» (Սկզբնաւորութիւն) անունով։

◆ Դեկտեմբերի 30-ին, երեկոյեան ժամը 5-ի մօտերը, Գօգօլևսկայա փողոցով անցնում էր հայրենասէր Նիկիֆօր Պէրուշկինը, որի կեանքի դէմ վերջերս անաջող մահափորձ կատարվեց։ Փողոցի անկիւնում նա նկատեց 5 անյայտ անձերի, որոնք, նրան տեսնելուն պէս, ատրճանակները ուղղեցին դէպի նա և կամենում էին կրակել։ Բայց նկատելով, որ Պէրուշկինի ետևից գալիս են մի քանի զինւորներ, թողել են իրանց մտադրութիւնը և փախել։ Պէրուշկինի ցուցմունքով, ոստիկանութիւնը զինւորների հետ շրջապատում է Մինաևի տունը, նոյն փողոցում, և ձերբակալում է 6 հոգու՝ Մելիքսեդէկ Դէվտօրիանին, Իվան Ջէգժիավային, Նիկօլայ Խարօբօվին, Լավրենտի Խուցիձիային, Իվան Զագրէշվիլուն և Բագրատ Խուրխիձէին։ Պէրուշկինը, բացի Դէվտօրիանից, ճանաչել է յանձին սրանց իրան սպանել ցանկացողներին։ Ոստիկանութիւնը ձեռնարկել է քննութեան։

◆ «Русь» թերթին Բագուից հեռագրում են. «Քաղաքապետ գեներալ Կանէվսկին, որ մի տարի միայն ծառայեց Բագւում, նոր տարուց հրաժարվում է իր պաշտօնից։ Արժանահաւատ աղբիւրներից բղխած լուրերին նայած, նրա տեղ նշանակվելու է Դրագունեան գնդի հրամանատար Ֆօլբաումը»։

◆ «Русь» թերթը հաղորդում է, որ Բագուի նաւահանգիստը յունվարի 1-ից 1908 թ. վերացվում է։ Տալով այս լուրը, «Бак. Эхо» թերթը իր կողմից աւելացնում է. «Բագուի նաւահանգիստը վերացնելու մասին մեզ ոչինչ յայտնի չէ և թէ որքան ճիշտ է այդ լուրը, յայտնի չէ»։

◆ Բագուի քաղաքապետը պ. Գէլօվանուն թոյլատրել է հրատարակել հասարակական քաղաքական և գրական լրագիր «Бакинскій Вѣстникъ» անունով։

◆ Ինչպէս հաղորդում են Բագուի լրագիրները, դերասանուհի Քնարիկը ինքնասպանութիւն է գործել, թոյն ընդունելով։ Նա մի նամակ է թողել, որի մէջ մանրամասն բացատրում է իր եղերական մահվան պատճառները։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Դեկտեմբերի լոյս 30-ի գիշերը Վօկզալնի փողոցում Իվան Ուսպատաշվիլուն մօտեցել են 3 անյայտ չարագործներ, վզից բռնել են, բերանին թաշկինակ են դրել և մահվան սպառնալիքով խլելով 28 ր. փող, անյայտացել են։ Ոստիկանութիւնը ձերբակալել է չարագործներից մէկին, որը իրան անուանել է Սերգէյ Սաղունաշվիլի, և որին Ուսպատաշվիլին ճանաչել է։

◆ Դեկտեմբերի 29-ին, երեկոյեան մօտ 11 ժամին, երբ Ալ. Կերեսալիձէն և Միխ. Իմզադօվը անցնելիս են եղել Մետեխի բանտի կողքով, 4 զինված անյայտ չարագործներ կանգնեցրել են նրանց և մահվան սպառնալիքով խլելով Իմզադօվից արծաթէ գօտին և ժամացոյցը 55 ր. արժողութեամբ, անյայտացել են։

◆ Դեկտեմբերի 30-ին, երեկոյեան ժամը 8-ին, 7-րդ քաղաքամասում, հինգ զինված մարդիկ մտնում են Եգօր Երիվանցօվի խանութը և յափշտակում են 21 ր. փող և ժամացոյցը և փախչում են։ Նրանցից մէկը՝ Բախշօ Ալէքսանդրօվը բռնված է։

ՖԷԼԻԷՏՕՆ

Դ ո ւ

Բժիշկ ես և մեզնից լաւ գիտես, որ համաճարակների զոհ են մեր գիւղերը, բայց հրաւիրված ու նոր նշանակված առաջնորդի պէս՝ Պօլսից գաւառ չես գնայ, որովհետև գերի ես դու մեծ քաղաքներին։

Բժիշկ ես, պիտի ներես, եթէ պարզ խօսելու հիւանդութեամբ բռնված ասեմ քեզ.

Դու ախտահանութեան, այսինքն դեզինֆեկցիայի ենթարկվելու կարիք ունես։

Որովհետև դրամական հիւանդութեան բացիլներին դու գերի՝ մասնագիտութեանդ ուսումնասիրութիւնը մնում է կէս ճանապարհին ու թերի։

«Բժիշկ, բժշկեա նախ զանձն քո»։ Որովհետև բժշկական տկարութիւնդ հիւանդներին է գերի, հիւանդներն էլ տկար բժշկութեանդ են գերի, երկուսին էլ ի միասին մատնում ես գերութեան, եթէ չասենք՝ մեռելութեան։

Ջեմ ուրանում. դու սիրում ես ազատութիւնը, երբ... երբ հիւանդը կարիք ունի երկար և ուշադիր զննութեան, մանաւանդ երբ ստանալիք վճարն էլ այնքան ապահով չէ։

Բայց դու նոյնպէս ազատութիւնը չես մերժի գերութեան վաճառելու, երբ մի ժամում հարիւր հիւանդ ունես ընդունելու և ճանապարհելու ի...ի վերինն Երուսաղէմ։

Կրկնում եմ. «Բժիշկ, բժշկեա նախ զանձն քո»։

Ցայտնի է քեզ, որ այս պատուէրը պատկանում է մեղքերի մեծ բժշկին, և ոչ թէ քո խոնարհ ծառայ, միւս աշխարհի էժանագին ապրանք՝ Մոծակին։

Դ ո ւ

Գ. խմբագիր, շնորհիւ նաւթ ու մաղութի քիչ կեղտոտված էիր, բայց դժգոհ չէիր... որովհետև վկայական, գրողի և «Մուրճի» խմբագրի պէս հալածված չէիր, որ գնայիր մանկավարժի, տեսչի և ուսուցչի պաշտօնը վարէիր և վաղը դրանցից էլ զրկված՝ գերի դառնայիր հանգամանքներին։

Ճիշտն ասած՝ չէր էլ կարելի պահանջել, որ դու էլ զգուշէիր և ընդհանուրի շահերով զբաղվէիր, որ միանգամայն խելացի չէ և գործնական, բայց տարիներով եթէ գերի չը դառնայիր քո սեփական ես-ին և մեծերի ինտերեսին, այսօր ցանկալի մարդն ու բարեկամը կը լինէիր թոյլ ու անգիտակից մշակների մեծ մասին և նրանց՝ այդ բանւորի ձեռքում այժմ չէիր զգայ քեզ դժոխքում։

Նոյնպէս չէ կարելի ուրանալ և այն, որ դու շատ էիր նուիրված ու գերի դարձած այն ժողովարաններին և ժողովներին, ուր դատապարտում, նախատում էին կոպիտ էքսպրոպրիացիան և դրա փոխարէն առաջ տանում, զարգացնում «վինտ» ու «բակարան»։

Դ ո ւ

Իրաւաբան ես, երդուեալ հաւատարմատար և մեր հիմնաւոր փաստերը հերքելու ընդունակ փաստաբան, եթէ... շահ չունես, երբեմն էլ մեր անփաստ շատախօսութիւնը լռութեամբ ընդունելու և պաշտպանելու ընդունակ, եթէ շահ ունես։

Այժմեան ստուար յանցանքներից, անօրէն վարք ու բարքից որքան էլ շահ ունենայ քո գրպան, երբ կոչված ես արդար իրաւունքի, հալածված ճշմարտութեան պաշտպան լինելու, դու չը պէտք է՞ ստրկանայիր ոչ մի ոյժի և հեղինակութեան, թէկուզ պաշտած քո կուսակցութեան։

Իսկ երբ տեսնում ենք քեզ անփաստ ու պերճախօս, փաստերով հարուստ, բայց անխօս, գերի հօնօրարի, գերի դէրբի և շահերի, չէ թէ փաստաբան, եղիր յայտնի մագիստրոս, պիտի ասենք.

— Դու ստրկութեան ես հերոս։

Դ ո ւ

Հայ ուսանող ես. որքան քաղցր յիշատակներ և մեծ յոյսեր են քո անուան մէջ խօսում ու խոստանում...

Կենդանի լեզուի ծնունդ, բերկրութիւն, նոր թոթովումներ մեր գրականութեան, «Վէրք Հայաստանի», բժիշկ, սպեղանի,— սրանք գործեր են հայ ուսանողութեան։

Եւ դու, լինելով ժառանգը մեր կենդանութեան ռահվիրաների, երբ կործանելու տեղ շինում, վերաշինում ես, լուրջ, խաղաղ տոկունութեամբ ստեղծագործում ես, բնական և անհատական ձիրքերդ կատարելագործում... դու իսկական ուսանող ես և մեր աչքերի վրա տեղ ունես։

Երբ քեզ ասում են.

— Մեր անկայուն և անհաստատ համոզումներ ուղղութեան են կարօտ, մեր այժմեան կեանքի ուղիները փշոտ ու շատ են քարքարոտ, ճշմարտութիւնը վիրաւոր է, կեղծն ու սուտը բիւրաւոր է, եկ, հայ ուսանող, օգնութեան,

Դու պատասխանում ես.

— Նու, վաս կը չօրտու։

Դու այլ ևս չես ուսանող, այլ ստրուկի մէկը, հողում թաւալող և խղճալի մի գերի լոկ «ուսանող» անունի և դիպլօմի։

Լ ա ւ,

Դու էլ գիմնազիստ, միջնակարգ դպրոցի աշակերտ ես. էհ, ինչպէս գովեմ քեզ և քո ազատութիւնը, երբ գերի ես թւանշաններին։

Եթէ դու գիտութեամբ զինվէիր և ոչ ատրճանակով, եթէ ծուլութեանը տայիր մահ նրա գնդակով և ոչ ընկերիդ ու ուսուցչիդ...

Մոծակը չէ, փիղն է,
Կը համարձակէր ասել քեզ.
Սիրելի, փոխանակ ուսուցանող գիժով— գրքերի,
Դու գերի ես դարձել մոլորեցնող կէնով— կրքերի։

Մոծակ Մորակեան

ՆՈՐ ՏԱՐՎԱՅ ՑԻՇԵԼԻՔՆԵՐ ԵՒ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր ընկերութիւններին.—Անվերջ բարեգործական երեկոյթներ անթիւ այցելուներով։
Այցելուներին.—Ազատվել տեղացող տոմսակների յորդ անձրևներից։
Նպաստամատոյցին.—Աղէտների դէմ բոյկոտ։
Բարեգործականին. — Բարեգործներ այդ ընկերութեան համար։
Կուլտուրականին.—Կուլ տուր, բայց և մարսիր։
Ազգագրականին.—Փութանակի ուսումնասիրութիւն մեռնող ազգութեան։
Տնայնագործականին. - Պարտիզանական կռիւ կապիտալ—Թագաւորի դէմ։
Նկարչական ցուցահանդէսներին.—Հասարակական անտարբերութեան նկարներ։
Գէորգեան ճեմարանին.—Այժմ հաց ուսման համար, իսկ ուսումը թէ ուսման և թէ հացի համար։
Ներսիսեան դպրոցին.—Թթու ազգասիրական կտակներ ջերմեռանդ բուրժուաներից։
Յովնանեան դպրոցին.—Հին ու նոր ուսուցիչների հակասական բողոքների ժողովածու։
Զիգրաշէնի դպրոցին.—Գրեթէ կամ մրցանակ ժողով յաճախող ծխականներին։
Դրամատիկական ընկերութեան.—Գաւառացիների բազմանալը Թիֆլիսում թատրոնական հասարակութիւն կազմելու համար։
Աւչալեան լսարաններին. — Ինչպէ՞ս, երբ հայկական սեկցիայի անդամների կռիւը վերացաւ, վերջացան և ներկայացումները՞ Ինչպէ՜ս
Եավրոսկուն.—Արգելված ռեպերտուարի պիէսներին մի մի օրական ամնիստիա։
Հայրիկեան ֆոնդին.—Նորագոյն գործեան հանգոյց։
Կապիտալիստներին.—Ազատ, ինքնաբերաբար նուիրատուութեան ապացոյցներ։
Աշխատաւորներին. — Ազատութիւն խոստում տուողների գերութիւնից։
Գիւղացիներին. — Ընդարձակ տարածութեան հողեր թղթի վրա։
Չակերտաւորներին. —Օպորտունիզմի փիլիսոփայութեան ուսումնասիրութիւն։
Քամելէոններին. —Աջ ու ձախ դիւապար։

դէպի կորուստ, այն ժողովուրդը, որի փրկութեան համար դու պատրաստ ես արիւնդ թափել։ Ուրեմն, լսիր ինձ, ականջ դիր ինձ ուշադրութեամբ։

— Ոչ, եթէ դու կարողանայիր, սիրելի Վաղարշակ, փարատել իմ վիշտը, ցոյց տալ ինձ, որ մեզ համար դեռ կայ փրկութիւն, դեռ կորած չէ ամեն բան։ Ես այլ ևս յոյս չունեմ. ինձ համար ամեն բան կորած է. այնքան անհագին և սոսկալի զոհերը, որ տուինք, ոչ մի հետևանք չարտադրեցին. մեր թշուառ հայրենիքը աւելի վատթար վիճակի ենթարկվեց. միւս կողմից՝ Սաղաթի պէս հերոսները սպանվում են իրա՝ հայի ձեռքով. ուրեմն ես, դու, մեր բոլոր ընկերները նոյնպէս կարող ենք սպանվել, մենք, որ մեր ամբողջ երիտասարդութիւնը, ոյժը, եռանդը գործ ենք դնում այդ հային փրկելու համար։ Միթէ այդպիսի ժողովրդի համար փրկութեան յոյս կայ։

— Կայ, կայ, սիրելի Վաղարշակ, միայն այնտեղ չէ, ուր դու ես կարծում. փրկութիւնը ուրիշ տեղից պէտք է գայ։

— Ցոյց տուր, տեսնեմ, որտեղից։

— Այս րոպէիս ցոյց կը տամ։ Ի հարկէ, Սաղաթի սպանութիւնը սոսկալի վիշտ է, բայց եթէ լաւ մտածենք, կը տեսնենք, որ նա, ինչպէս ասեմ քեզ, նու, եթէ ոչ մի տեսակ հատուցումն, մի տեսակ պատիժ է մեր սխալ գործունէութեան համար, այլ նախազգուշացումն, այլ հրաւէր յետ կենալու սխալ ճանապարհից։ Համբերութիւն ունեցիր մինչև վերջը լսել ինձ։ Սաղաթին սպանողը մի խեղճ, անկիրթ բանւոր էր, բայց միևնոյն ժամանակ մի բարի, անձնուէր և անվեհեր տղայ։ Ես կարդացի, որ նա յաճախ անձնուիրական գործեր է կատարել և նոյնիսկ կոմիտետների որոշմամբ վտանգի դրել իր կեանքը, սրան-նրան տերրորի ենթարկելով։ Նրան, այդ խեղճ, բարի, բայց անկիրթ և պարզ տղային շարունակ քարոզում էին, որ հարստահարողին պէտք է պատժել, որ շահագործողին պէտք է սպանել։ Եւ նա հաւատում էր անպայման. այդ քարոզները նա յաճախ լսել էր Սաղաթի բերանից և անպայման կատարել նրա հրամանները։ Բայց ահա եկաւ մի օր, որ Սաղաթը անարդարութիւն գործեց նրա վերաբերմամբ. նա արձակում է նրան այն գործարանից, ուր նա բանւոր էր. խեղճ, ազէտ տղան համարում է այդ՝ հարստահարութիւն, շահագործութիւն. խնդրում է, աղաչում, պաղատում, ոչինչ չէ օգնում. և ահա նա դիմում է այն զէնքին, որ իր ուսուցիչները սովորեցրել էին նրան. այդ ուսուցիչները շարունակ հալել էին նրա ուղեղի մէջ, որ հարստահարողին պէտք է սպանել. Սաղաթը այժմ նրա աչքում հարստահարող էր, և նա իր անմշակ, բիրտ խելքով վճռում է սպանել նրան ու գործադրում է վճիռը։ Զէնք էին տուել նրա ձեռքը, և նա զէնքը դարձրեց իրան տուողների դէմ. նա մեղաւոր չէ. մեղաւոր են նրանք, որոնք սովորեցրին նրան, թէ պէտք է սպանել՝ ով հարստահարութիւն է գործում. նա իր անմշակ, բիրտ խելքով անկարող էր որոշել, թէ իր դէմ արվածը հարստահարութիւն չէ, այլ մի իրաւացի ակտ, որ ինքն իրաւունք չունի դատաւոր լինել։

— Ի՞նչ ես ուզում դրանով ապացուցանել։

— Այն, որ ով սրով կը գործէ, ինքն ևս սրից կընկնի. այս անմահ ճշմարտութիւնը 2000 տարի առաջ քարոզեց Քրիստոս, բայց դեռ անըմբռնելի է մնում մեզ համար. այն, որ բռնութեամբ չէ կարելի ազատութիւն, արդարութիւն ձեռք բերել. բռնութեան վրա չէ կարելի հիմնել ժողովրդի ազատագրութեան գործը. բռնութիւնը իր կողմից մի ուրիշ բռնութիւն առաջ կը բերի. միշտ կը գտնվի մի ուրիշը, աւելի բռնաւոր և աւելի զօրեղ, որ նոյնպէս կը բռնանայ քեզ վրա և կը հարստահարի քեզ։ Անկարելի է որևէ գաղափարի, իդէալի, բարոյական մտքի յաղթանակը տանել բռնութեան միջոցով։ Դու կարող ես այսօր քո ուզածը առաջ քշել բռնութեան, սրի միջոցով, բայց վաղը կը գայ մի ուրիշը, որ նոյն սրով կը ջնջէ քո արածը և իրանը առաջ կը տանէ ու քեզ էլ կոչնչացնէ։ Գաղափարները յաղթանակել կարող են միայն համոզմունքի, քարոզի, պրօպագանդայի, արդարութեան և ճշմարտութեան միջոցով։ Խոր մտածիր ասածներիս մասին և դու ինքդ կը համոզվես, որ ես արդար եմ։

Վահանը լսում էր մեծ ուշադրութեամբ, այդ խօսքերը նոր, բոլորովին նոր էին նրա համար. նա դրանց մասին չէր մտածել, իսկ այժմ... այժմ նրան թւում էր, որ դրանք այնքան պարզ, անսասան ճշմարտութիւններ են, որ նա զարմանում էր, թէ ինչպէս մինչև այժմ նրա մտքին չէին եկել. գուցէ հէնց նրա համար մտքին չէին եկել, որ շատ պարզ էին։ Եւ նա զգում էր, շօշափում էր, որ Վաղարշակի խօսքերը քաղցր սպեղանի էին նրա հոգու վէրքերի համար. նա զգում էր, որ չքանում է հոգու դառնութիւնը, վրէժխնդրութեան ծարաւը։

Եւ նա, աղերսագին, դիմեց ընկերին.

— Ոչ, շարունակիր, շարունակիր, Վաղարշակ, պատմիր. իմ աչքս այժմ բացվում է. ես կոյր էի։

Վաղարշակը շարունակեց պատմել նրան, բերել ապացոյցներ համաշխարհային պատմութիւնից, թէ ոչ մի միտք, ոչ մի գաղափար, ոչ մի գիւտ, ոչ մի կուլտուրա չէ տարածվել մարդկութեան մէջ զէնքի ոյժով, բռնի, այլ խօսքի, համոզմունքի, գաղափարի, անձնազոհութեան միջոցով։ Ոչ մի հանճարի, մտքի արտադրութիւնը չէ դարձել մարդկութեան սեփականութիւն զէնքի միջոցով. ընդհակառակը, բռնութիւնը միշտ կոպտացրել է բարքերը, տարածել է վայրենութիւն և աւերել է կուլտուրան, գրգռելով մարդկանց մէջ արեան, վրէժխնդրութեան, կեղծաւորութեան և այլ բազմաթիւ անբարոյական յատկութիւններ։

Դուրսը քամին արդէն դադարել էր. այլ ևս չէր լսվում նրա մռնչիւնը. այլ ևս սուր, սառն հոսանքը չէր թափանցում սենեակի մէջ։

Վաղարշակը լռեց. նա խօսել էր ամբողջ ժամեր. կէս գիշերը վաղուց հնչել էր։ Նա վեր կացաւ, գնաց բացեց դուռը և, տեսնելով երկնակամարը արդէն ազատված գորշ և թանձր ամպերից ու աստղազարդ, փակեց դուռը ու նորից նստեց տախտի վրա, այս անգամ վստահ իր տարած յաղթանակի մասին։

Վահանը խորասուզված էր մտքերի մէջ. կարծես այլ ևս չէր նկատում ընկերոջ ներկայութիւնը։

Ցանկարծ նա բարձրացրեց գլուխը, թեքվեց դէպի ընկերը, մի ջերմ համբոյր դրոշմեց նրա երեսին և ուրախ, զուարթ ասաց.

— Դու իրաւացի ես. անկցի բռնութիւնը, թող կորչի բռնութեան գործիքը՝ զէնքը. մեր դատը՝ սուրբ, վեհ դատը՝ պէտք է հիմնել միայն գաղափարի վրա։ Գործենք գաղափարով. թող այսուհետև մեր զէնքը լինի համոզմունքը, քարոզը, պրօպագանդան, անձնուիրութիւնը. կազմենք կուռ բանակ. թող ծագի նոր օր, Նոր-Տարի մեզ համար։

— Եւ անպատճառ կը ծագի, նա արդէն ծագել է. եկ, ցոյց տամ քեզ։

Եւ բռնելով Վահանի թևից, Վաղարշակը տարաւ նրան դէպի դուռը, բացեց և մատով ցոյց տուեց աստղազարդ երկնակամարը։

— Մի քանի ժամ առաջ խաւար էր, դըժոխք, քամու մռնչիւն. և գորշ, թանձր ամպեր սևացրել էին այս գեղեցիկ երկնակամարը. դու յուսահատված էիր, կարծելով թէ այդ խաւարը, այդ ամպերը չեն անհետանայ. այժմ նրանք չքացել են. այժմ երկնակամարի վրա, տեսնո՞ւմ ես, փայլում է մի մեծ աստղ, որ աւետում է արշալոյսը, նոր կեանքը. դա Լուսաբերն է. դա աւետում է նոր օր, Նոր-Տարի և նոր կեանք։ Խաւարին յաջորդեց լոյսը. Հին տարուն յաջորդում է Նորը. ահա նրա կարապետը՝ Լուսաբերը։ Գնանք նրա ետևից. նա մեզ կառաջնորդէ դէպի փրկութիւն։ Գընանք. երկրպագութիւն Լուսաբերին, և կեցցէ յաւիտեան նոր կեանքը, որ սկսվելու է այս Նոր-Տարուց. կեանք մտքի, գաղափարի և կռուի, կեանք արդարութեան և ճշմարտութեան յաղթանակի։

Եւ «կեցցէ Լուսաբերը, կեցցէ Նոր-Տարին» աղաղակները, բղխած երկու ընկերների կրծքից, թնդացին աստղազարդ երկնակամարի տակ։

Պատգամաւորներին. — Բառանդամ ընտրութեան մասին ճառեր։

Քաղաքական կուսակցութիւններին.—Ի՞նչ գործադրութիւն կարող է ունենալ կուսակցութիւնների վերաբերեալ հայկական առածը՝ «շունը իր տիրոջը չէ ճանաչում»։

Հին ու նոր դաշնակցական, հնչակեան կազմակերպութիւններին.—Ձե՛րն խոստովանիմ։

Կադետներին.—Դարձեալ մի քանի դատավարութիւններ նման վըբորգեան կոչի առիթով եղածին։

Եղեկեանին.—Սեդրակեանի գումարների վերականգնումը։

Ա. Ստեփանեանին.—Սեդրակեանի յիշատակարանների հրատարակութիւնը։

Սունդուկեանին.—Սեփական ձեռքով հիմք դնել հայկական թատրոնի շէնքին։

Թիւրքահայերին.—Փոքր ինչ ազատութիւն չափազանց հոգատար դայեակներից։

Պարսկահայերին.—Սահմանադրութիւն չեղաւ, մի ցաւ ու փորձանք եղաւ։

Ամերիկահային, եգիպտահային.—Յեղափոխութիւն է յեղափոխութեան մէջ, թէ՞ մի ուրիշ բան։

Տեղակալին.—Եթէ լինէր հարուստ մեծատուն, սնդուկներս լի ոսկով արծաթով...

Եպիսկոպոսներին.—Հերթով կաթողիկոսութիւն։

Վարդապետներին.—Նոր պօլօժէնիա, որ իրաւունք տայ քուէարկվել կաթողիկոսութեան համար։

Տէրտէրներին. — Հարկաւոր չէ ժամ, այլ ժամուց. հարկաւոր չէ համբոյր, այլ աջահամբոյր։

Աղքատներին.—Բոյկոտ հարուստների դէմ, գործադուլ ուտելու մէջ։

Լրագիրներին.—Բառարան լրագրական նոր անունների համար։

Խմբագրութիւններին.—Բաւութեան նոխազի լուսաբանութիւնը։

Աշխատակիցներին.—Տուր ինձ քո ձեռքդ, եղբայր։

Բժիշկներին.—Միկրոբների պարահանդէս և նուագահանդէս։

Իրաւաբաններին.—Անքակտելի սէր, համերաշխութիւն և միաբանութիւն քաղաքացիների մէջ։

Ինժեներներին. — Ամուր կամուրջներ, չը քայքայվող շինութիւններ, չը խորտակվող գնացքներ, չը խախտվող ճանապարհներ։

Օրիորդներին.—Նոր-Տարի նոր կեանքով։

Մանուկներին.—Տօնածառի ոգևորութիւնը դարձած ոգևորութիւն կեանքի կռուի համար։

Մայրերին.—Մանուկների փայլուն աչքերի լոյսը անշէջ։

Մեր գրաշարներին. — Մաքուր ձեռագիրներ։

Մեր թղթակիցներին.—Վահանով կամ վահանի վրա։

Մեր ընթերցողներին. — Շնորհաւոր Նոր-Տարի։

Վրձին

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԷՊՔԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Մարաղա, 20 դեկտեմբերի

Նախորդ թղթակցութեամբս գրել էի, որ իշխան Ֆարման-Ֆարմանը Թաւրիզից ճանապարհվել է դէպի Միանդաբ, ուր սպասում է նրան սարդարը և որտեղ պիտի համախմբվի զօրքը ու որոշվի Քիւրդստանի ճակատագիրը։ Ահա 12 օր է որ իշխանը դուրս է եկել Թաւրիզից և միայն այսօր, լսում ենք որ, հասել է Բինաբ, որ գտնվում է Թաւրիզի և Միանդաբի միջակէտում. իշխանը 12 օրում առաջացել է երկու օրվայ ճանապարհ։

Այդ յապաղումը աւելի է գրգռել քիւրդերի ախորժակը և առիթ տուել նորանոր խըտացման, կազմակերպման։ Աւելի համոզվելով՝ որ երկիրը ներկայումս գտնվում է սոսկալի անիշխանական դրութեան մէջ, դրանց ոտնձգութիւնները աւելի են առաջ գնում. խմորվում է ստեղծել եթէ ոչ մի անկախ Քիւրդստան՝ հապա գոնէ մտնել և հովանաւորվել «մուսլիմ խունդքարի» դրօշի տակ... Եւ ահա այդ իսկ նպատակով քիւրդական առաջնակարգ իշխանաւորների մի խորհրդակցութեամբ որոշվում է յետ մղել Պայիզ-աղայի մասնաւոր արշաւանքի (այժմ այդպէս են ասում) ուղղութիւնը և ընդգծել մի ընդհանուր, տիրապետող ծրագիր։

Ս.-Բուլաղում արդէն պարսիկներ չը կան. մնացած վերջին պաշտօնեաները, քարտուղարը և մաքսատան, պօստատան կառավարիչները խոտորնակ ճանապարհով հեռացած են քաղաքից, ինչպէս և հայերից մի քանի վաճառականներ. դրութիւնը այնտեղ աննախանձելի է. դրանցից մէկի նամակում գրված սոյն երկտողը ուշագրաւ է. «Քաղաքը համարեա թէ պատերազմական դրութեան մէջ է. առևտուր չը կայ. ընդհանուր սարսափը քանի գնում՝ աւելանում է. ընդհանուր յարաբերութիւնը այլազգիների հետ շատ խորթ է. հաց չենք կարողանում գտնել, ծախսի համար փող էլ չունենք...» Աւելի ուշագրաւ է հետևեալ հանգամանքը։

Ամսիս 11-ին այստեղ ծպտեալ հագուստով մի դասիդ (հետևակ սուրհանդակ) Ս. Բուլաղից բերեց մի քանի նամակներ՝ գըրված տեղական շահբենդէր միրզա-Շարիֆ էֆէնդու կողմից. այդ նամակներից մէկը ուղղված էր մի թիւրքահպատակ հայի՝ Ա. Խալաֆեան, իսկ միւսները այստեղի մի քանի քիւրդերին, որոնք պարապվում են վաճառականութեամբ. պ. Խալաֆեանի նամակը հետևեալն էր. «Ի նկատի ունենալով որ ներկայ շարժման առիթով ծագած խառնակութիւնները կարող են հասնել և այդտեղ, ուստի հրաւիրում ենք ձեզ, որպէս տաճկական հիւպատոսարանի ագենտի, պաշտպանել այդտեղում գտնվող մեր հպատակ քիւրդերին...»։

Իսկ քիւրդերին գրած նամակներից մէկը ես տեսայ, որտեղ կար հետևեալ պարբերութիւնը... «Մենք բոլորս ընդունեցինք թիւրքահպատակութիւն, ձեզ համար էլ շուտով անցագիր կուղարկենք. մի՛ վախեցէք. ձեզ պաշտպանելու համար այսօր առանձին նամակ գրեցինք մեր ագենտ պ. Խալաֆեանին. այսօր քաղաք մտաւ մի հարիւրեակ երկու սպայով. Զագիդ (ոչ Զարուշ) փաշան զիջանելով մեր թախանձանքին՝ ընդունել է քաղաք գալու. վաղը սպասում ենք նրան...» Ահա կամաց-կամաց բարձրանում է ողբերգութեան վերջին արարուածի վարագոյրը...

Իսկ ինչ է անում մեր կառավարութիւնը, չարաբաստիկ թւականիս տարաժամ ծնունդ մեր սահմանադիր ժողովը... Ամեն կողմից դաւեր են որ նիւթվում են մեր երկրի համար. շրջապատված ենք արտաքին բախտախնդիր աշիրաթներով, բախտախնդիրներով, աֆղաններով, քիւրդերով և քաղաքական գիշատիչ ճիրաններով. իսկ ներքին տնաւեր պառակտումը տխուր հետևանքներ է գուշակում... Այո, «ժամանակը յղի է ծանր դէպքերով». տայ Աստուած որ այդ ծնունդը կործանարար չը լինէր։

Մ. Տէր-Յակովբեան

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍՄԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍՄԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.

Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։

Կ. Ի. ԳՁԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։

Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նախասմարդեան

✦ ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ✦

Հրատարակութիւնները

		կ.
1.	Վայրի կարապներ (սպառ.)	8
2.	Առաջին վիշտ (սպառ.)	10
3.	Անտառապահ (սպառ.)	12
4.	Աշխէնն ու Մարգարիտը (սպառ.)	10
5.	Աղքատի բախտը (սպառ.)	5
6.	Գոհարիկն ու Աստղիկը (սպառ.)	10
7.	Նելլօն և Պատրաշը (սպառ.)	10
8.	Գիւղում (սպառ.)	20
9.	Կենդանի է արդեօք	8
10.	Բարեկամներ (սպառ.)	12
11.	Առակներ բնական պատմութ.	12
12.	Մագնիս	12
13.	Արջի պատմութիւնը. Գայլը	15
14.	Ողնիներ	8
15.	Թմփլիկը	12
16.	Լեռան աղջիկը (սպառ.)	20
17.	Բու	12
18.	Փոքրիկ Պարոյրի արկածները	15
19.	Փիղ	8
20.	Ռուբէնի զբաղմունքը	25
21.	Որբ Աննան	12
22.	Արցունք	15
23.	Անձնազոհ մանուկ	10
24.	Դարևոր կաղնին	6
25.	Խրամատի եզերքին (1 գուն. պատկ.)	10
26.	Լուսատտիկներ (4 գուն. պատկ.)	40

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին։
(28. 1. 9.) 3—2

ԲԺԻՇԿ
Մելիք-Էյնաթեան
Վեներական, միզասեռական և մորթու հիւանդութիւններ
Ընդունելութիւն | 9—10 առաւօտ. 5—7 երեկ.
Կսենիեվսկայա փող. № 6, Վեյցել հիւրանոցի մօտ։
(ե. հ. շ.) 30—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Վերադարձաւ Կովկասի հանքային ջրերից և վերսկսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդների, առաւօտ. 9—12 ժ., երեկ. 5—7 ժամ։
Միքայէլեան փողոց, № 27։
(ե. հ. շ. կ.) 50—48

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին և երեխայոց, առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր | 12—1 ժ. առաւօտեան 5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց տ. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 100—77

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։
(ա. օ.) 100—77

Բացված է 1908 թ. բաժանորդագրութիւնը
(ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

„ՀԱՍԿԵՐ"

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

Ամսագիրը լոյս է տեսնելու Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով, նախկին ընդարձակ ծրագրով՝ մշտական աշխատակցութեամբ Յովհ. Թումանեանի։

«ՀԱՍԿԵՐԻՆ» համակրող ծնողների մի շրջանի ձեռնտուութեամբ խմբագրութիւնս հնարաւորութիւն է ստանում աւելի ճոխացնելու ամսագրի բովանդակութիւնն ու պատկերները։ 1908 թ. լոյս են տեսնելու, ի միջի այլոց, Ալ. Ահարոնեանի «Գունատ տղայ», Լէօյի «Մեր բակի կեանքից», Յովհ. Թումանեանի հեքիաթները, Շանթի «Փոան աչև», և Սադալեանի «Օջախի պահողը»։

Ամսագիրը ունի նաև ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ուր շօշափվում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևորագոյն հարցեր։

Առանձին գրքոյկով լոյս կը տեսնի՝ «Ինչ կարդան մանուկները»—քննադատութիւն վերջերս լոյս տեսած հայերէն մանկական գրքերի։

Բաժանորդագինն է ճանապարհածախսով

Տարեկան. «Հասկեր», մանկական բաժին 3 ր., մանկավարժ. բաժնով 4 ր., կէս տարվանը 1 ր. 80 կ., մանկավարժ. բաժնով 2 ր. 10 կ., մէկ ամսվանը 30 կ., մանկավարժ. բաժնով 35 կ., Պարսկաստանում 3 ր. 50 կ., մանկավարժ. բաժնով 4 ր. 50 կ., արտասահմանում տարեկան 9 ֆր., մանկավարժ. բաժնով 12 ֆր., հրատարակութեան սկզբից մինչև 1908 թ. վերջը 9 ր., մանկավարժ. բաժնով 11 ր. 50 կ.։

Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բեհբութեան փող. 25. (Тифлисъ, редакція журнала „Аскеръ", կամ Tiflis (Caucase) Redaction du journ. «Hasker».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՆԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆ

Թիֆլիսում կարելի է գրվել նաև «Գուտտենբերգ» գրախանութում և «Փարոս» կիօսկում, իսկ Բագւում՝ Сотрудникъ գրախանութում։

(1, 6, 12) 3—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
և վաճառվում են

„ԱՐԱՔՍ"
1908 թ.

ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
հետաքրքիր և հարուստ բովանդակութեամբ։

Գները՝ պատինը արժէ | 40 կ.
ծոցինը » | 20 կ.

Դիմել՝ Александрополь, типографія Саноянa. Թիֆլիսում պահեստը գտնվում է «Փարոս» գրախանութում Նիկ. Մատինեանի, Эрив. площадь. Գումարով գնողներին ձեռնտու պայմաններ։

(ե. հ. կ.) 26—22

Բացված է 1908 թ. անպայման կանխիկ բաժանորդագրութիւն

ԱՂԲԻՒՐ ԱՂԲԻՒՐԻ նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի փառք ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը։ ԱՂԲԻՒՐԸ իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր։

ՏԱՐԱԶԸ ԱՂԲԻՒՐԻ **ՏԱՐԱԶ** հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացմունքների թարգմանը։ ՏԱՐԱԶԸ ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտված, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքված հայ անդամներ սնուցանել։

XXVI մանկական պատկերազարդ ամսագիր և XIX պատկերազարդ, երկշաբաթաթերթ. Բաժանորդագրութիւն.— Աղբիւր 3 ր. (արտասահման 5 ր.) Տարազ—6 ր. (արտասահման 10 ր.), Աղբիւր-Տարազ, յաւելուածներով 10 ր. (արտասահման 50 ֆր.)։ Տարազի առանձին №-ը 50 կ., Աղբիւր-Տարազ փղոսկրեայ թղթի վրա 100 ր.։

Խմբագրատունը՝ Թիֆլիս, Մադաթեան փող., տ. № 5, բաց է ամեն օր. (բացի կիրակի և տօն օրերից) առ. 10 ժ. մինչև 2-ը կէսօրից յետոյ։ Հասցէն՝ Тифлисъ, ред. Таразъ. Rédaction du journal Taraz. Տելէֆօն № 282, Caucase, Tiflis.

Աղբիւր և Տարազ հանդէսները կը հրատարակվեն այնքան №№ և այն ծաւալով, որը կը թելադրէ վճարող բաժանորդների թիւը։

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը, յայտնելով որ առաջիկայ Նոր-տարվայ եւ Ծննդեան տօների առիթով շնորհակալութեամբ ընդունում է ԱՂՔԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՒԷՐՆԵՐ դրամով, մթերքներով և շորով, ամենայն օր ժամը 10-ից մինչև 2-ը ընկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская площ. № 7), խոնարհաբար խնդրում է բարեսիրտ անձերին օգնութեան հասնել թշուառներին։ Ընդունվում են նաև նուիրատուութիւններ տօների այցելութիւնների փոխարէն։ 5—4

ՍԵՓԱԿԱՆ այգուց ստացված «Կախեթի» վաղան խաղողից պատրաստված կարմիր գինի ուզողներին կարող եմ յանձնել Գանձակի կայարանում՝ ՎԵԴՐՈՆ (30 ֆունտ) 1 ՌՈՒԲԼԻ 30 ԿՈՊ։ Դիմել հետևեալ հասցէով. Аветику Артемьевичу Саакянцу (Бананцеци). 5—5

Լոյս տեսաւ
ՍԱՀԱԿ ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑԻ
«ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ»
առաջին տարվայ պատկերազարդ հրատարակութիւնը։
(օ. մ.) 10—4

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Կարապետ ԱՓԻՆԵԱՆԻ
ԾՈՑԻ և ՊԱՏԻ
1908 թ.
„ՇԻՐԱԿ"
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
(Տասներորդ տարի)

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ զարդարված է Խրիմեանի, Նազարեանի, Չերազի և Մառի գունաւոր պատկերներով, պարունակում է ընդարձակ վիճակագրութիւն երկրագնդի, գրագիտութիւնը, պարբերական թերթերը զանազան երկիրներում։ Պետութիւնների ծախսերը և զինուորական ծովային ու ցամաքային ոյժերը։ Ռուսաստանի ազգութիւնները, դպրոցները, վանքերը, վանականների ռոճիկները։ Մուրհակների օրէնքներ և օրինակներ, չափ, կշիռ, դրամներ։ Դրոշմաթուղթ, բնակարանի հարկ, վարձատրութիւն նոտարների, դատական պրիստաւների, երդ.-հաւատարմատարների։ Պոստ և հեռագիր, խընայողական գանձարաններ։ Զինուորագրական օրէնքներ, նորակոչ զինուորների չափը։ Անցագիր և բողոքելու ատեաններ։ Հարուստ բժշկարան, առողջապահական խորհուրդներ։ Ինչից ստեղծվեց աշխարհը, երբ կը վերջանայ աշխարհը։ Հայկական հարցը 1878 թւի Բերլինի վեհաժողովը, Սան-Ստեֆանօի 16-րդ և Բերլինի 61-րդ յօդուածները. ինչ շահեցինք Եւրոպայից։ Անիի գաղթականութիւնը դէպի Լեհաստան, Նիկոլ Թորոսովիչ, 300,000 հայերի վիճակը և վախճանը Լեհաստանում. Անիի նոր պեղումները—պրոֆ. Մառ։ Ծերերի ազատութիւնը Ռուսաստանում, գիւղացիական շարժումներ։ Զօրքը Անգլիայում։ Կենսագրութիւններ՝ Խրիմեան Հայրիկ, Մինաս Չերազ, Ս. Նազարեան—«Հիւսիսափայլի» 50-ամեակը։ Ճանապարհորդական—երկաթուղի, շոգենաւ, կառքեր։ Երգարան—Քուչակի և Հաֆըզի սիրոյ երգերից։ Հանելուկներ, րեպուսներ և զուարճալի վիճակարան։

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է ընտիր մտքեր, աֆօրիզմներ, հարուստ ժամանակագրութիւն և բանաստեղծական փոքրիկ հատուածներ. եկեղ. և ազգային տօների պատմական բացատրութիւններ, զանազան հեթանոսական սովորութիւններ, գիտական նորութիւններ, բնութեան երևոյթների բացատրութիւններ, առողջապահական, բժշկական խրատներ, արհեստների վերաբերեալ օգտակար գիտելիքներ, եապօնացիների, հընդիկների, հաբէշների և քրդերի կեանքից զուարճալի պատմութիւններ, պատմական նշանաւոր դէպքեր հայկական, ռուսական և եւրոպական կեանքից, հետաքրքիր թւեր և տեղեկութիւններ, ինչպէս են ծախսվում հասարակական գումարները, զինուորական ոյժ և պատերազմական ծախքեր։ Հողը Ռուսաստանում, ում ձեռին են հողերը։ Ազգային քնար—նորագոյն բանաստեղծութիւններ, աշուղական խաղեր—սիրոյ երգեր Քուչակի և Հաֆըզի, հետաքրքիր տեղեկութիւններ բուսական և կենդանական աշխարհից, թռչունների և կենդանիների հետաքրքիր կողմերը, կենսագրութիւններ, զուարճալի դէպքեր մեծ մարդկանց կեանքից։ Ժողովրդական առածներ, երգեր, լէշեր, զուարճալի ՆՈՐ ԱՌԱԿՆԵՐ, տընային տնտեսութեան վերաբերեալ կարևոր խրատներ, խոհարարական խորհուրդներ, հանելուկներ, շուտասելուկներ, վիճակներ և այլ զուարճալի տեղեկութիւններ։

Տախտակը բազմաթիւ գոյներով, լիտօգրաֆիայում պատրաստված մի շքեղ նկար է՝ «Մանուկ Հայաստան», հայրենի աւերակների մէջ նստած մայրը ցոյց է տալիս մանուկին դէպի Մասիսը, ապագայ ճառագայթող արշալոյսը, միւս կողմից Շիրակի աշխատաւոր հայ կնոջ ոգին՝ տարվայ բերքը—հասկեր է ձօնում։

Գները՝ պատինը—40 կոպ., ծոցինը—15 կոպ., գումարով գնողներին զեղչ։

Դիմել՝ Александрополь, типографія „Ширакъ", Карапету Апинянцъ. Արտասահմանից—Alexandropol, Karapet Apinian (Caucase)

Ալեքսանդրոպոլում չը դիմել ուրիշ ոչ մի հասցէով։ (ու. ե.) 8—7

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձևով հաշուապահութիւն և ուրիշ մասնագ. առարկ.

Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։

Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքներն սկսվելու են 1908 թ. յունվարի 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրի։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատեստատներ։

Դրանից անկախ՝ բացված է քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул., № 22, ամենայն օր։

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։

(կ. ե. հ.) 15—10

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мурдусіакопов съ С-ми. Большая Ванкская д. Семинаріи № 3